

крестьянская **ԽՈՒՐՈՒՅԻՆ**
Газета **ՀԱՅԱՍՏԱՆ**

Բ. ԳՈՐԵԼԻԿ

ԽՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ
Գյուղատնտեսական կյանքի մեր մեր

Ցերեռդ զառախոսություն

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Դառախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Հայաստան“-ի պատ. խմբագիր Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ընդհանուր խմբագրությամբ

07
Գ-81

ՀԿ(Բ)ԿԿԿ հրատարակություն — „Խորհրդային Հայաստան“

Յ Ե Բ Ե Վ Ա Ն

1936

07
7-81

Դասախոսությունները լույս են ընծայվում „Խորհրդային խմբագրության կից կազմակերպված մեթոդական ժողովի կողմից, հիմք ընդունելով „Խրեսյանսկսա“-յի ուսումնական կոմբինատի հրատարակած գրությունները:



Կոլեկցիաների և բրդագույնի պատի թերթերի խմբագրության հետևյալ ուսումնական դասընթացների դեկտեմբերի բանգյուղիցների բաժնի վարիչ՝ Մ. ՄՍ

- ԴԱՍԱԽՈՍՈՒԹԵՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՁԵՍՆՈՒՄ
ՀԵՏԵՎԵՍԻ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ.
ՈՒԿՐԱՅՆԵՐԵՆ,
ԲԵԼՈՒՍԵՐԵՆ,
ԹԱՐԱՐԵՐԵՆ,
ԿԱԶԱԿԵՐԵՆ,
ՎՐԱՅԵՐԵՆ,
ՀԱՅԵՐԵՆ,
ԹՈՒՐԿԵՐԵՆ,
ԲԱՇԿԻՐԵՐԵՆ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
ՈՒՋԲԵԿԵՐԵՆ

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՋ ԿՈԼԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

36-Վ
Շ1285

I. ՈՎՔԵՐ ԵՆ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Պատի թերթի շուրջն ակտիվ ստեղծել՝ այդ ամենին չի նշանակում մի քանի հոգու գյուղ-թղթակից գրել և զրանով ել հանդստանալ, ինչպես հաճախ արվում է:

Գործարանի, կոլտնտեսության, գյուղիորհերի ակտիվը պետք է շարունակ համախմբել կոմունիստական կուսակցության հերթական խնդիրների շուրջը: Նույնը վերաբերում է նաև պատի թերթի ակտիվի մեջ աշխատելուն:

Վորպեսզի պատի թերթի թղթակիցները գոյություն չունենան լուր թղթի վրա, այլ լինեն կենդանի մարդիկ, վորոնք լավ գիտեն, քե իրենք ինչի համար են պայքարում այսօր և ինչի համար պիտի պայքարեն վաղը, դրա համար հարկավոր է գյուղաքաղաքիցներին դաստիարակել կոմունիստական վրձով: Նրանց պետք է շարունակ դեկավարել: Նրանց պետք է սովորեցնել:

Միթե՞ մեզ մոտ չեն լինում այնպիսի դեպքեր, յերբ իրեն գյուղթղթակից անվանող ընկերը թերթին գրում է ամեն մի դատարկ բանի մասին (թե ով ում հայհոյեց, ով պատահաբար մի բան ասաց), իսկ լուրջ փաստերի մասին լուրում է, չի

1 MAR 2019

19038

սեփական, որիցով, կույակի վնասարարական աշխատանքի փաստերը:

Լինում են և այնպիսի դեպքեր, յերբ վորոշ մարդիկ ճշմարտ են մամուլի միջոցով անհատական հաշիվներ մաքրել, աղավաղում են փաստերը, սուտ լուրեր են տարածում:

Տեղ-տեղ գյուղթղթակիցներին շարքերն են խծելում այնպիսի մարդիկ, վորոնք արժանի չեն գյուղթղթակիցի պատվավոր անունը կրելու, որինակ՝ լուրեր, գլխողներ, իսկ յերբեմն ել՝ բացահայտ դատակարգային թշնամիներ: Այդ պատահում է այնտեղ, ուր գյուղթղթակիցներին չեն զեկավարում, ուր չեն հետևում գյուղթղթակիցային շարքերի դատակարգային կազմի մաքրությանը:

Այս գրությունն ստեղծվում է նաև այն ժամանակ, յերբ պատի թերթերի խմբագիրները գյուղթղթակիցներին համարում են այնպիսի մարդիկ, վորոնք յերբեմն-յերբեմն կարող են վրեժե բան գրել թերթին, և վոչ թե իրենց վողջ աշխատանքի հենարան լինել: Մինչդեռ բանվոր ու գյուղացի թղթակիցը դա վոչ թե պարզապես մի մարդ է, վորը գրիչ է առնում իր ձեռքը:

Յեվ իսկապես, ո՞ւմ հայտնի չեն բանդրակից և գյուղդրակից բառերը: Այդ բառերը ծանոթ են տասնյակ միլիոնավոր մարդկանց: Յեվ վոչ միայն մեր անծայրածիր սոցիալիստական հայրենիքի յուրաքանչյուր անկյունում, այլև հնախորդ արտասահմանում, ոտար յերկրներում:

Ամենուրեք, ուր հնչում է բանվորական մամուլի ձայնը, կոմունիստական թերթերը չըջապատված են հարյուրավոր ու հազարավոր բանվոր ու գյուղացի թղթակիցներով: Նույնիսկ Փաշիստական ռեժիմի ամենազաժան պայմաններում (Դերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում,

Ճապոնիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, և այլ յերկրներում) գոյություն ունեն, զարգանում ու պայքարում են կոմունիստական կուսակցություններն ու նրանց թերթերը: Ամենախոր ընդհատակ քշված այդ թերթերից յուրաքանչյուրն ունի կուսակցությանը նվիրված հարյուրավոր ու հազարավոր բանթղթակիցներ ու գյուղթղթակիցներ: Մեր այդ արտասահմանյան ընկերներն աշխատում են անլեզու, հեղափոխական ընդհատակում, աշխատում են կոմունիստների հետ կողք-կողքի: Նրանք իրենց կյանքն են տալիս աշխատավորության գործին: Նրանք կախաղան են բարձրանում, տաժանակիր աշխատանքի յեն գնում ու բանտ են նստում նրա համար, վոր ճամարտություն են գրում կոմունիստական մամուլում, տարածում ու պաշտպանում են այն:

Խորհրդային Միության մեջ բանդրակիցներն ու գյուղդրակիցները—դրանք աշխալիստական շինարարության ակտիվ մասնակիցներն են, կոմունիստական կուսակցության ու խորհրդային իշխանության նվիրված ու հավատարիմ ոգնականներն են, ակտիվ խորհրդային հասարակական աշխատողներ են և հարվածայիններ արտադրության մեջ:

Բանգյուղդրակիցները այդ այն բանվորներն ու կուլտեսականներն են, վորոնք լինելով հարվածային ու ակտիվ հասարակական աշխատող, միաժամանակ գրում են մեր բոլշևիկյան մամուլում: Այդ այն բանվորներն ու կուլտեսականներն են, վորոնք իրենք հարվածային աշխատելով՝ մամուլի միջոցով աշխատում են, վոր մեզ մոտ բոլորը և ամենուրեք աշխատեն հարվածայինորեն:

Դրա համար նրանք յեկույթ են ունենում մամուլում, թերթերում՝ իրենց ընդունակություն-



60202.65

ներն ու ուժերը նվիրելով իրենց գործարանի, իրենց կոլտնտեսութեան ուսումնասիրութեանն ու նվաճումների նկարագրութեանը, թերութեաններն ուսումնասիրութեանն ու վերացմանը, վատ աշխատանքի քննադատութեանը: Նրանք անողորձաբար մերկացնում են դասակարգային թշնամիներին, ուսորտունիստներին, ժուլիկներին, բյուրոկրատներին:

Լավ գյուղթղթակից լինելու հատկանիշն այն է, վոր նա ուշադիր կերպով դիտում և ուսումնասիրում է կոլտնտեսութեան կյանքը, զգայուն կերպով մամուլում արձագանքում և յուրաքանչյուր հետաքրքիր յերևույթի, յուրաքանչյուր նոր հարցի, կոլտնտեսային յուրաքանչյուր մարտական խնդրի: Լավ հարվածային-գյուղթղթակիցն ավելի խոր է թափանցում յերևույթների մեջ, շոշափում է այնպիսի հարցեր ու առաջարկութեաններ, վորոնք կարող են հետաքրքրել կոլտնտեսային հասարակութեանը: Մի խոսքով գյուղթղթակիցը բոլշևիկյան ձեռներեցութեամբ մի մարդ է, վոր խորապես ըմբռնում է կոլտնտեսային շինարարութեան վոչ միայն այսօրվա, այլ և վաղվա հարցերը:

II. ՍՏԱՆԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՂԹՐԴԹԱԿԻՑՆԵՐԸ

Այժմ մեր յերկրում մի նոր, հզոր, մասսայական շարժում է ծավալվել՝ տեխնիկայի լավագույն ոգտագործման համար: Դոնրասի փառապանծ հորատող ընկ. Ստախանովի նախաձեռնութեամբ սկիզբ է առել մի նոր վերելք՝ այն պայքարում, վոր մղվում է իրականացնելու համար ընկ. Ստախնի ցուցումները, թե՛ պետք է թամբել տեխնիկան, քամել նրանից այն ամենը, ինչ վոր նա կարող է տալ, նոր տեխնիկայից կրկնա-

կի ավելի շատ ստանալ, քան տալիս է նա այսօր: Ի՞նչ է արել դրա համար ընկ. Ստախանովը: Նա բարելավել է իր աշխատանքի մեթոդները շախտերում, ավելի լավ է դասավորել իր բրիգադի ուժերը, լիովին ծանրաբեռնել է բանվորական ուրը, բրիգադում աշխատանքի ճիշտ քաշում է կատարել: Ընկ. Ստախանովն իր մոտ վերացրել է հին կարգը, վորի ժամանակ հանքափորը միաժամանակ նաև հանքախորչի պատերն ու առաստաղն ամրացնող եր: Այդ կարգի փոխարեն Ստախանովը ածխահատների բրիգադում աշխատանքի խիստ մասնագիտացում մտցրեց: Հանքափորը լավ մասնագիտանում է ածուխ կտրելու գործում, իսկ ամրացնողը՝ ամրացնելու: Առաջ հանքափորը շատ ժամանակ էր կորցնում փորման աշխատանքից ամրացմանն անցնելու և ամրացման աշխատանքից փորմանն անցնելու վրա: Իսկ այժմ այդ ժամանակն ոգտագործում է ածուխ կտրելու համար: Ածուխ հանելու նոր, ստախանովյան մեթոդը նրան հնարավորութեան տվեց, փոքրացնել իր բրիգադի բանվորների թիվը, պակասեցնել խտացրած ողի ու յուղելու նյութերի ծախսումը: Այս ամենն ընկ. Ստախանովին հնարավորութեան տվեց իր հատող մուրճի արտագործականութեանն այնպիսի բարձրութեան հասցնել, վորպիսին առաջ չէր տեսել Դոնրասը:

Աշխատանքի ստախանովյան մեթոդները դարձան վո՛չ միայն Դոնրասի սեփականութեանը: Ստախանովյան շարժումը—այդ պայքար է տեխնիկայի առավելագույն ոգտագործման համար: Ստախանովյան մեթոդները աշխատանքի այնպիսի սխառեմ է, վորը հնարավորութեան է տալիս իսկապես թամբել տեխնիկան և քամել նրանից այն ամենը, ինչ վոր նա կարող է տալ: Այժմ ամենուրեք ստախանովականներ կան: Նրանք ար-

դեն չատ են: Լենինգրադի «Սկորսոդ» գործարանի բանվոր ընկ. Սմետանինը վերջերս նոր համաշխարհային ռեկորդներ տվեց. նա մեկ հերթափոխում 1820 գույգ կոշիկի յերես քաշեց: Այդպիսի ռեկորդ չի տեսել և վաչ մի կապիտալիստական յերկիր: Գորկու ավտոգործարանի բանվոր դարբին Բուսիգինը այժմ տալիս է այնպիսի ռեկորդներ, վորոնք չատ հետ են թողնում ամերիկյան դարբինների ամենաբարձր նվաճումները: Վիչուգսկիի Նոգինի անվան գործարանի ջուլհակուհի Վինոգրադովան սպասարկում է 208 դադգյահ: Ստախանովյան շարժումը ծավալվում է նաև յերկաթուղային արանսպորտում. այստեղ պայքար է մղվում շողեքարչերի չրջանառության ամենաբարձր արագության համար, տեխնիկայի ամենաբարձր ոգտագործման համար: Այստեղ նախաձեռնությունը պատկանում է մեքենավար Կրիվոնսին:

Թե վորքան մեծ է ստախանովյան շարժման նշանակությունը, յերեւում է մեր առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ հետեյալ խոսքերից.

«Ստախանովյան շարժումը չի կարելի դիտել վորպես բանվորների ու բանվորուհիների սովորական մի շարժում: Ստախանովյան շարժումը բանվորների ու բանվորուհիների այնպիսի մի շարժում է, վորը մեր սոցիալիստական չինարարության մեջ կմտնի վորպես նրա ամենափառավոր եջերից մեկը»:
(Ստախանովական բանվոր-բանվորուհիների Համամիութենական առաջին խորհրդակցությանն արտասանած ընկ. Ստալինի ճառից):

Ստախանովյան շարժման նշանակությունն ամենից առաջ այն է, վոր նա արտահայտում է սոցիալիստական մրցության նոր, ավելի բարձր աստիճանը: Սոցիալիստական մրցության անցյալ

ետապից ստախանովյան շարժումը նրանով է տարբերվում, վոր այն կապված է նոր տեխնիկայի հետ: Ստախանովները, Բուսիգինները, Սմետանինները, Կրիվոնոսյանները, Վինոգրադովաները և չատ ուրիշները—դրանք նոր, առանձնահատուկ մարդիկ են: Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք լիովին տիրապետել են իրենց գործի տեխնիկան, թամբել են այդ տեխնիկան և առաջ են քշել: «Այդպիսի մարդիկ,—ասել է ընկ. Ստալինը,—մի յերեք տարի առաջ մեզ մոտ չեն յեղել: Դրանք նոր, առանձնահատուկ մարդիկ են»:

Դրանք այնպիսի մարդիկ են, վոր շարունակ համարձակորեն առաջ են գնում: Նրանք վիրում են հնացած տեխնիկական նւրմաները, ստեղծում են աշխատանքի արտադրողականության ավելի բարձր նորմաներ և այդ շնորհիվ այն բանի, վոր նրանք լիովին տիրապետում են իրենց տեխնիկային և կարողանում են նրանից քամել այն ամենը, ինչ վոր կարելի յե քամել նրանից:

Արդեն չատ այնպիսի կոյտնտեսություններ կան, վորտեղ մարդիկ լիովին ոգտագործեյով տեխնիկան ու ագրոնոմիան՝ ցորենի բերք են ստանում հեկտարից 20-30 ցենտներ, այնտեղ, ուր առաջ 8 ցենտների յել չեր հասնում:

Այնուհետև վերցրեք Մարիա Դեմչենկոյի Խրինակը, վորի անունը հայտնի յե ամբողջ Խորհրդային Միությանը: Մարիա Դեմչենկոն և մյուս հինգհարյուրականները ճակնդեղի դաշտերի լավագույն ինամքով կարողացան հեկտարից 500 ցենտներից ավելի ճակնդեղ ստանալ:

Վերցրեք, այնուհետև, մեր յերկրի նշանավոր կոմբայնավար ընկ. Ֆեոդոր Լուխովին: Նրա անունը ևս գտնվում է Ստախանովի, Սմետանինի, Բուսիգինի, Մարիա Դեմչենկոյի անունների շարքում: Ընկ. Կուլեսովը, կոմբայնը լավ ուսումնա-

սիրելով, դեռ 1934 թվին կոմբայնով հավաքեց 512 հեկտարի բերք: Բայց նա ասաց, վոր 512 հեկտարը վերջին սահմանը չի: Հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարում ընկ. Կոլեսովը ընկեր Ստալինին խոսք տվեց 1935 թվին 600 հեկտարի բերք հավաքել: Համագումարից տուն վերադառնալով՝ ընկ. Կոլեսովը խոստացավ ավելի լավ աշխատել և հետևանքը փայլուն յեղավ. 1935 թվին ընկ. Կոլեսովը կոմբայնով 751 հեկտարի բերք հավաքեց:

Կոլտնտեսային գյուղում այդպիսի նոր, առանձնահատուկ մարդիկ, սոցիալիստական գյուղատնտեսության ստախանովականներ արդեն շատ կան: Հայտնի յեն տրակտորիստ Գրիգորի Իլյիչ Դրմովի, մեխանիկ Վարվառա Բախովիցայի, Փերմայի վարիչ Պյոտր Վասիլևիչ Բոքիմի և շատ ուրիշների անունները: Այս բոլոր մարդիկ ստախանովականների պես համարձակորեն հեղափոխականացնում են իրենց աշխատանքի մեթոդները և հասնում են աշխատանքի բարձր արտադրողականության, դրանով իսկ բարձրացնելով կոլտնտեսության յուրանների ու կոլտնտեսականների յեկամուտը:

Այժմ կարևոր է, վոր ստախանովյան շարժումը, այնպիսի մարդկանց որինակը, ինչպիսին են Մարիա Դեմչեկոն, Կոլեսովը և այլն, պետք է համակի բոլոր բանվորներին ու կոլտնտեսականներին: Բավական չի, վոր միայն առաջավորները լավ աշխատեն: Հարկավոր է, վոր բոլորը մրցեն իրար հետ լավագույն կերպով իրականացնելու համար ընկ. Ստալինի յողունդն այն մասին, թե պետք է թամբել տեխնիկան և քամել նրանից այն ամենը, ինչ նա կարող է տալ: Մեր կոլտնտեսային հողը կարելի յե և պետք է շատ ավելի լավ մշակել, քան այժմ: Մեքենաներն ու

տրակտորները կարելի յե և պետք է ոգտադործել նշանակալից չափով ավելի լավ:

Ստախանովյան շարժման մեջ վիթխարի դեր պիտի խաղան գյուղթղթակիցները—սոցիալիստական հողագործության հարվածայինները: Յեվ ամենից առաջ՝ նրանց անձնական որինակը: Յուրաքանչյուր գյուղթղթակից պետք է դառնա մրցության նոր վերելքի նախաձեռնողը՝ տեխնիկայի ու ագրոնոմիայի լավագույն յուրացման համար, աշխատանքի լավագույն մեթոդների համար և համարձակորեն ու վճռաբար պիտի կիրառի կյանքում ընկ. Ստալինի ցուցումն այն մասին, թե հարկավոր է «մոտ ապագայում, մի յերեք-չորս տարուց հետո հացի տարեկան արտագրքությունը հասցնել 7-8 միլիարդ փիթի»:

Այնոր գյուղթղթակիցներն այն մարդիկ են, վորոնք սգնում են յուրաքանչյուր ստախանովականի, վորոնք իրենք ել դառնում են ստախանովական և մյուս կոլտնտեսականներին ել բացատրում են ստախանովյան շարժման նշանակությունը:

Գյուղթղթակիցների անձնական որինակը, նրանց նախաձեռնությունը խոշոր դեր է խաղում: Մեծ է լինելու գյուղթղթակիցների գրչի նշանակությունն և ուժը ստախանովական շարժման մեջ:

Ընկ. Ստալինը ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությանն առաց.

«Խնդիրն այն է, վոր ստախանովականներին ոգնենք ել ավելի ծավալելու ստախանովյան շարժումը և տարածենք այն լայնությամբ ու խորությամբ ԽՍՀՄ-ի բոլոր մարզերում ու շրջաններում»:

Յեվ ահա, այստեղ գյուղթղթակցի գրիչը

կարող եւ և պետք է իր մարտական դերը խաղա: Գյուղթղթակիցը պետք է սիրով ու ջերմորեն նկարագրի թերթում իր ստախանովականներին, իր կոլեսովներին, իր դեմէնկոներին: Պետք է նկարագրի նրանց նախաձեռնութիւնն ու փորձը, նրանց նվաճումներն ու կյանքը: Գյուղթղթակիցը պետք է հիշի ընկ. Ստալինի խոսքն այն մասին, թե ստախանովյան շարժումը մեզ մոտ կարողացավ ծնունդ առնել և ամբողջ յերկրում չտեսնված արագութեամբ տարածվել նրա համար, վոր կյանքն ավելի լավ է դարձել, կյանքն ավելի ուրախ է: Իսկ յերբ կյանքն ուրախ է, աշխատանքն էլ քեքեւանում է: Գյուղթղթակիցը պետք է իր թղթակցութիւններում ցույց տա այդ կյանքը և բացատրի, վոր կյանքն ե՛լ ավելի լավ կլինի, ե՛լ ավելի ուրախ կլինի, յեթե բոլոր կոլանտեսականներն սկսեն աշխատել այնպես, ինչպէս աշխատում են Կոլեսովը, Շեստոպալովը, Դեմէնկոն:

Թե գյուղթղթակցի գրիչը վորքան մեծ նշանակութիւն ունի ստախանովյան շարժման զարգացման գործում, այդ յերևում է Համամիութենական առաջին խորհրդակցութիւնում հենց իրենց՝ մի քանի ստախանովականների պատմածից: Ահա թե իմիջի այլոց ինչ եր ասում ընկեր Լեսյակովան (Մոսկովայի Ֆրունզեյի անվան գործարանի ջուլհակուհի):

«Այժմ ստախանովական շարժման մասին: Մի որ յերեկոյան տուն եմ գալիս, թերթը վերցնում և տեսնում՝ Ստախանով, Կրիվոնոս: Վոչ մի կերպ չեմ հասկանում, թե նրանք ինչ են շատ տվել: Վերցնում եմ թերթերը, տեսնում եմ՝ Վինոգրադովան համաշխարհային ջուլհակուհի: Տե՛ր իմ... համաշխարհային ջուլհակուհի... Այդ ինձ հուզեց,

հանգստանալ չեմ կարողանում ու մտածում եմ.—միթե՞ յես չեմ կարող համաշխարհային ջուլհակուհի լինել: Յես կարծում եմ, վոր կարող եմ և պետք է լինեմ»:

Թերթում տպված թղթակցութեան թողած նույնպիսի ազդեցութեան մասին իր ճառում պատմեց նաև ընկ. Չեկուևովան (Կունցեի տեքստիլ գործարանից):

«Յես ինչպե՞ս մտա ստախանովյան շարժման մեջ: Ստախանովյան շարժման մեջ յես այսպէս մտա. կարգացի Դուսյա Վինոգրադովայի մասին: Յեկա տուն. յես յերկու յերեխա ունեմ և ամուսին: Յերեխաներին պառկեցրի ընելու և մտածում եմ՝ արի թերթ կարդամ: Վերցրի «Ռաբոչի Մոսկվա»-ն, տեսնեմ՝ այնտեղ գրված է Դուսյա Վինոգրադովայի մասին, իսկ հետո՝ Լյուբիմովի՝ ճառը: Արի, մտածում եմ, յես ել գնամ Վիկտոր Դիմիտրեվիչի մոտ և խնդրեմ, վոր իմ աշխատանքն ել խտացնի...»:

Իր յերկրթում նույն բանը նչեց նաև նշանաւոր մեքենավար Կրիվոնոսը.

«Մի անգամ յես թերթը վերցրի և տեսա մի թղթակցութիւն, թե՛ Լազար Մոյսեսեվիչը այցելել է Կազանի դեպոյի մեքենավարներին, վորտեղ նրանց առաջ խնդիր է դրել, թե ինչպէս մի միջոց գտնենք, վոր ավելացնենք չողեքարչի շրջանառութիւնն ու որական միջին վազքը»:

Ինչպէս տեսնում եք, լրագրի լավ թղթակցութիւնը մեծ նշանակութիւն ունի ստախանովականների նորանոր ջոկատներ դաստիարակելու գործում: Ահա այդպիսի ուժ ունի և պիտի ունենա գյուղթղթակցի գրիչը, նրա թղթակցութիւնը

ները պատի թերթում: Ստախանովյան չարժման մեջ թերթի ունեցած դերի մասին իր ճառում նշեց նաև ընկ. Որջոնիկիձեն՝ ստախանովականների խորհրդակցությունում: Նա ասաց.

«Այստեղ յես պետք է ասեմ, վոր դուք բոլորդ և ընկեր Ստալինն ել, իմանաք, — վոր մեր լրագրային լավ աշխատողներից մեկը՝ «Կադեյսկի Պրոլետարի» թերթն ու նրա խմբագիր ընկ. Կապլանը, հենց նույն ընթացքին, յերբ տեղի ունեցավ այդ խոշորագույն կարևորություն ունեցող փաստը — ընկ. Ստախանովի մուրճի հարվածը, — ընկ. Կապլանը իսկույն այդ փաստը փոխադրեց իր թերթի եջերը, փողահարեց փողջ Դոնբասով մեկ և հետո արդեն այդ տարածվեց ամբողջ յերկրում»:

Այն, ինչ վոր արել է «Կադեյսկի Պրոլետարի»-ն Դոնբասի մասշտաբով, ինչ վոր արել է «Պրավդա»-ն ամբողջ յերկրի մասշտաբով, նույնը կարող է և պետք է անի կոլտնտեսային պատի թերթը իր բրիգադի մասշտաբով, իր կոլտնտեսության մասշտաբով: Բայց դրա համար հարկավոր է, վոր նրա թղթակիցները դրեն ստախանովականների մասին, ոգնեն նրանց իրենց աշխատանքում և ստախանովականների փորձը տարածեն ամբողջ բրիգադում, ամբողջ կոլտնտեսությունում:

Պատի թերթում ցույց տալով կոլտնտեսության ստախանովականներին՝ գյուղթղթակիցները պետք է անդադար մերկացնեն այն մարդկանց, վորոնք չեն ոգնում ստախանովականներին, խանդարում են նրանց, ձախողում են նրանց աշխատանքի նոր մեթոդները: Գյուղթղթակիցն այս գործում առանձնապես զգոն պիտի լինի: Դասակարգային թշնամիները ճգնում են վնասարարական մեթոդներով խանդարել ստախանովյան չարժման զարգացումը, կոտորում են ստախանովականների մեքենաները.

փչացնում են նրանց դադգյահները և գործիքները, տարածում են ամեն տեսակ չարամիտ լուրեր: Այստեղ գյուղթղթակիցն ըստ ամենայնի զինված պիտի լինի և անդադար պիտի մերկացնի դասակարգային թշնամիներին:

Յերբեմն ստախանովյան չարժումը խանդարում են և առանձին դեկավարներ: Առաջարկելով ստախանովյան չարժումը խորացնել ու ծավալել՝ ընկ. Ստալինը խնդիր դրեց.

«Սանձահարել տնտեսական ու ինժեներ-տեխնիկական աշխատողներից այն բոլոր տարրերին, վորոնք համառորեն կառչում են հնին, չեն ցանկանում առաջ շարժվել և սխտեմատիկաբար արգելափակում են ստախանովյան չարժումը»:

Կոլտնտեսություններում ևս կան այնպիսի դեկավարներ, վորոնք կառչում են հնին և չեն ցանկանում առաջ շարժվել: Այդ մարդկանց պետք է համբերությամբ համոզել, վոր վերակառուցվեն: Իսկ յեթե պատի թերթերում տեղավորած թղթակցությունները չեն ոգնում, ապա գյուղթղթակիցները հարկադրված այդպիսի մարդկանց մասին պետք է հայտնեն վերադաս կուսակցական կադմակերպություններին, չրջանային, մարզային և կենտրոնական մամուլին, վորպեսզի այդպիսի մարդկանց նկատմամբ ավելի վճռական միջոցներ ձեռք ունենան:

III. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՍՏԱԼԻՆԸ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱ-ԿԻՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր յերկրում բանգյուղթղթակիցներն սկսեցին յերևան գալ դեռևս այն ժամանակ, յերբ նոր էյին միայն սկիզբ առել բանվորական մամուլի ա-

առջին որդանները — հեկտոգրաֆիկ թերթիկները (1895—1896 թվերին) :

Այդ թերթիկները կազմվում էին բանվորների ամենաակտիվ մասնակցությամբ: Հենց վոր այդ թերթիկները հրատարակ յեկան, բանվորները սկսեցին ֆարրիկներից ու գործարաններից բառացիորեն թղթակցություններով հեղեղել նրանց խմբագրությունները:

Այդ բանգյուղթղթակցական շարժման առաջին աստիճանն էր, վորը, բուլհիկյան թերթերի հանդեպ դալու հետ, սկսեց ծավալվել: «Իսկրա» թերթում (1900—1903 թ.թ.) բանգյուղթղթակիցներին հատկացվում էր աշխատի բաժիններ, ինչպիսիք են «Բանվորական շարժման խրոնիկան և նամակներ ֆարրիկներից ու գործարաններից»:

1905 թվին Լենինը, վոր խմբագրում էր «Վպերյոդ»-ը գրում էր.

«Մենք խնդրում ենք թղթակցել բոլորին և մանավանդ բանվորներին: Ավելի լայն հնարաբանություն ավել բանվորներին՝ գրելու մեր թերթում, գրելու վճռականապես ամեն ինչի մասին, վորքան կարելի յե շատ գրելու իրենց առորյա կյանքի մասին, իրենց շահերի ու աշխատանքի մասին» (Լենին Յերկերի ժողովածու, հատոր VI):

Լենինը յուրաքանչյուր թղթակցին ու նրա նախակին խոշոր նշանակություն էր տալիս: Հաճախ նա ինքը կարդում և նույնիսկ մի քանի անգամ էր կարդում ստացված յուրաքանչյուր նամակը, վոր պեսզի ավելի խոր, ավելի պարզ, ավելի ճշգրիտ հասկանա նամակի հեղինակի միտքը, այդ միտքը ճիշտ մշակի թերթում տպագրելու համար: Նա սիրով զրուցում էր իր թղթակիցների հետ, լսում էր նրանց, նշում էր նրանց կենդանի թեմաները (հար-

ցերը) և ողնում էր, վոր նրանք թղթակցություններ ու հոգվածներ գրեն:

Առաջին ուսում բանթղթակցի՝ Բարուշկինի մասին Լենինը հատուկ հոգված գրեց՝ նրան անվանելով «Իսկրա»-յի «ամենաջերմեռանդ թղթակիցը և նրա լավագույն կառուցողը»:

Ընկ. Ստալինը դեռ 1925 թվին բանգյուղթղթակիցների մասին այսպես ասաց.

«Նրանք տպավորվող, ճշմարտության կայծով վառվող մարդիկ են, վորոնք ցանկանում են մերկացնել, վորոնք յերբեմն չափից ավելի յեն ծռում ճիպտոր, վորոնք ցանկանում են ինչպես ել լինի՝ ուղղել մեր թերությունները, մարդիկ են, վորոնք չեն վախենում գնդակից, — ահա այդ մարդիկ, իմ կարծիքով, պետք է հանգիստանան տեղերում մեր կուսակցական ու խորհրդային աշխատանքի թերությունները վերանշուր և ուղղելու հիմնական լծակներից մեկը»:

Կարելի յե հարյուրավոր գյուղթղթակիցներ թվել, վորոնք կոմունիստական կուսակցության գործի համար մղած պայքարում չեն խնայել ուսյնիսկ իրենց կյանքը: Գյուղթղթակիցներ Ստրիգունովի, Սապրիկինի, Պլյուսկոյի և մյուս ընկերներին անունները յերբեք չեն մոռացվի: Նրանք ընկան կուլակների դաշույնից, գնդակից, վոր անկյուններից արձակվում էր Լենինի-Ստալինի կուսակցության մեծ գործի համար մղվող պայքարում այդ հերոսների թիկունքին:

Ընկ. Ստալինն ասել է, վոր բանգյուղթղթակիցները «պետք է լինեն պրոլետարական հասարակական կարծիքի հրամանատարները»:

Այդ նշանակում է, վոր բանգյուղթղթակցի ուժը վոչ թե շրջապատի վրա վարչական ազդեցություն ունենալն է, այլ այն, վոր նա պետք է լինի

այսպես ասած՝ բոլորի համար հասարակական «խիղճ»։ Գյուղափոխակցի ձայնը կոլտնտեսությունում պետք է լինի առաջավոր հասարակական կարծիքի ձայնը, այսինքն այն ամենի ձայնը, ինչ վարավ է կոլտնտեսությունում, ազնիվ է ու առաջավոր։ Գյուղափոխակցի բերանով, քղաքակցություններով, նամակներով պետք է խոսի մեր խորհրդային հասարակայնությունը։

Ընկ. Ստալինը գյուղթղթակիցների մասին ասել է.

«Դուք գիտեք պրոլետարական հասարակական կարծիքի ուժը մեր խորհրդային հասարակայնության թերությունները մերկայացնելու, ուղղելու գործում—նա շատ ավելի լուրջ ուժ է, քան վարչական ճնշման ուժը»։

Դիմելով հատկապես «Կրեստյանսկայա Գազետա» թերթին, նրա տարեգարծի որը՝ 1924 թվին, ընկ. Ստալինը գրել է. «Կրեստյանսկայա Գազետա», աչքիդ լույսի պես պաշտպանիր քո գյուղթղթակիցներին— այդ քո բանակն է»։

IV. ԻՆՉՊԻՍԻՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԳՅՈՒԼԹՎԹԱ-ԿԻՅԸ

Իսկական գյուղափոխակցի հատկանիշը ևս պետք է լինի համեստությունը և վոչ քե գոռոգանալն ընկերների մոտ թե ահա՝ «յես գյուղթղթակից եմ, յես մի առանձնահատուկ դեմք եմ»։

Վատ է այն գյուղթղթակիցը, վորը չարունակ է ամենուրեք դուռում է, թե ինքը գյուղթղթակից է և դրա հիման վրա ել դեպի իրեն առանձնահատուկ վերաբերմունք է պահանջում այն կազմակերպություններից, վորոնց ինքը գիմում է իր զանազան կարիքների համար։ Համեստ գյուղթղթակիցը

կպահանջի այն, ինչ հասնում է իրեն որենքով, ինչպես յուրաքանչյուր կոլտնտեսականին և վոչ թե կգիմի իր «գյուղթղթակցային աստիճանի» ոգնությանը։

Մյուս կոլտնտեսականներից տարբեր վոչ մի առանձնահատուկ իրավունք չունի գյուղափոխակցը։ Նա նույնպիսի հարվածային է, ինչպես մյուս հարվածային կոլտնտեսականները, վորոնք թերթում չեն գրում։

Գյուղափոխակիցը խմբագրությունից վոչ մի հատուկ վկայական չպետք է պահանջի, վորովհետև նա հասարակական աշխատող է և վոչ թե թերթի հաստիքային աշխատող։


Վատ է այն գյուղթղթակիցը, վորն իր համար հատուկ բլոկնոտներ, բլանկներ է պատվիրում վորոշ ճակատով (վոր ցույց է տալիս, թե նա գյուղթղթակից է), սպառնում է մամուլի հետ իր ունեցած կապերով, սպառնում է «նեքեկ» թերթում։ Այդպիսի դեպքեր յեղեք են, դրա համար ել մենք նախազգուշացնում ենք, վոր այլևս չկրկնվեն։ Իսկական հասարակական աշխատող գյուղթղթակցին վոչ մի մանդատ ու վկայական հարկավոր չի նրա գյուղթղթակից լինելու մասին։

Ճիշտ այդպես էլ գյուղափոխակիցը չպետք է կտրի քերքերից մյուս կոլտնտեսականներին, վորոնք ցանկանում են վորևեք բան գրել քերքերին։ Կան գյուղթղթակիցներ, վորոնք այսպես են առում։

«Յես այս կոլտնտեսության գյուղթղթակիցն եմ։ Միմիայն յես կարող եմ գրել։ Իսկ մյուս կողմնտեսականները թող նյութ տան ինձ գրելու»։

Այս գյուղափոխակցային գոռոգություն է։ Այդպես անել չի կարելի։ Յեթե դու իսկական գյուղթղթակից ես, պետք է աշխատես, վոր քո կողմ

60202-67



տնտեսությունից, քո բրիզադից վորքան կարելի
յե չատ մարդ թղթակցի թերթերին:

Գյուղաքաղկիցը թերթի կամավոր ակտիվիստն
է: Հարկավոր չի ժողովներում գյուղաքաղկից
ընտրել: Հարկավոր չի նաև քաղկիցներ նշանա-
կել:

«Բանքաքաղկիցն ընտրե՞լ բանվորների ժողո-
վում, քե՞զ նրանց խմբագրությունները ջոկեն: Իմ
կարծիքով յերկրորդ ձևը (խմբագրությունների
ջոկելը) ավելի նպատակահարմար ձև է»¹, — այսպես
է ասել ընկ. Ստալինը դեռ 1924 թվին «Ռաբոչի
կորրեսպոնդենտ»-ի աշխատակցի հետ ունեցած
զրույցում:

Զի կարելի նաև գյուղաքաղկիցների համար
կանոնադրություններ կազմել: Զի կարելի նրանցից
ինքնապարփակ կազմակերպություններ ստեղծել:

Դեռևս «Պրավդային» կից բանգյուղթղթակից-
ների համամիութենական յերկրորդ խորհրդակցու-
թյունը (1925 թ.) նշեց. «աշխատանքի պայմաններն
ու աշխատանքը բանթղթակցական կազմակերպու-
թյունը դարձնում են մասսայական, փափոխվող ու
լրացվող կազմով, վոր թելադրվում է այդ կազմա-
կերպության մեջ կաստայացած կորիզ առաջանա-
լուց պաշտպանելու անհրաժեշտությունով, վոր-
պեսդի աշխատանքն այնպես կառուցվի, վոր նրա
մեջ ներգրավվեն բոլոր ցանկացող ընկերները»: Կու-
տնտեսություններում գյուղթղթակիցները միավոր-
ների չպետք է լինեն, ինչպես դեռևս մեզ մոտ լի-
նում է չատ կուտնտեսություններում, այլ պիտի
մասսաներ լինեն: Ահա թե ինչու վնասակար է
գյուղթղթակցային աշխատանքի մեջ սահմանա-
փակվել, ինքնապարփակ խմբակների ստեղծումով,
անդամներ ընդունելու հատուկ կանոններով, անկե-
տաներ լրացնելով և այլն:

1) «Рабочий корреспондент» № 6, 1924 г.

Հարկավոր չէ գյուղթղթակիցների դռնփակ ժո-
ղովներ գումարել և ինչ վոր հատուկ վորոշումներ
ընդունել, վորոնցով գյուղթղթակիցներին պար-
տավորեցնել վորևէ հարցի մասին այսպես կամ այն-
պես հանդես գալ, կամ պարտավորեցնել նրանց
գրել ըստ պատվերի:

Հարկավոր չէ ստեղծել վորևէ տեսակի «գյուղ-
քաղկիցական բյուրո»: Հարկավոր չէ գյուղաքաղ-
կիցներին ամբացնել մշտական բրիգադների կամ
պոստների, վորոնք նմանվեն կուտնտեսության մյուս
կազմակերպություններից տարբերվող հատուկ
կազմակերպությունների, վորովհետև գյուղթղ-
թակիցներն աշխատում են այդ կազմակերպու-
թյուններից ամեն մեկում — գյուղխորհրդում,
կուսկազմակերպությունում, կոմյերիտկազմակեր-
պությունում:

Գյուղաքաղկիցը գրում է կենտրոնական, մար-
գային կամ շրջանային թերթին, վորին ինքն ան-
հրաժեշտ է գտնում տվյալ փաստի կամ տվյալ
հարցի մասին գրել: Հարկավոր չի թղթակիցներին
ստիպել, վոր անպայման այս կամ այն թերթին
գրեն, կամ վորևէ պարտադիր կարգով թղթակից-
ներին բաշխել ըստ թերթերի: Յուրաքանչյուր
գյուղթղթակից ազատ է գրելու այս կամ այն թեր-
թում:

Մյուս կողմից՝ հարկավոր չէ կուտնտեսու-
թյունում գանազան թերթերի քաղկից գյուղ-
քաղկիցներին բաժանել առանձին խմբակների:
Վորոշ խմբագիրներ գյուղթղթակից են համարում
միայն նրանց, ովքեր գրում են կենտրոնական,
մարգային կամ շրջանային թերթին: Իսկ նրանց,
ովքեր պատի թերթին են թղթակցում, իսկական
գյուղթղթակից չեն համարում և «մեծ» թերթերի
թղթակիցներից տարբերելու համար նրանց անվա-

նում են «պատի թերթի թղթակիցներ»։ Այդ ճիշտ չէ՝ ԲՈՒՄ գյուղապետիցները, անկախ նրանից, քե վոր քերթին են քղթակցում, միանման գյուղապետիցներ են։ «Մեծ» թերթերի թղթակիցները չպետք է գոռոզանան պատի թերթերի թղթակիցների առաջ։

Բոլոր գյուղթղթակիցները, — և՛ նրանք, վորոնք գրում են տպագիր թերթերին, և՛ նրանք, վորոնք գրում են միայն իրենց պատի թերթին, — նրանք բոլորը համախմբվում են պատի քերթի խմբի մեջ։ Տպագիր քերթերի գյուղապետիցները պետք է ակտիվորեն մասնակցեն պատի քերթի աշխատանքներին։ Անթույլատրելի չէ, վոր տպագիր թերթի գյուղթղթակիցը խուսափի գրել պատի թերթին և արհամարհի այն, վորպես «փոքրիկ» թերթի։ Այդ ևս սնանկարժույթյուն է, վորի դեմ պետք է պայքարեն խմբիկները։

V. ՈՒՄ ՀԱՄԱՐԵԼ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑ

Սա պակաս կարևորություն ունեցող հարց չէ։ Վորոչ թերթեր գյուղթղթակից են համարում իրենց նիսկ նրան, ով թեկուզ և պատահաբար թերթին միանձնական գանգատ կամ նամակ է գրել։ Մյուսներն, ընդհակառակն, գյուղթղթակից են համարում միայն նրանց, ովքեր շատ են գրել։

Ճիշտ չեն, վոր՛չ մեկը, վոր՛չ մյուսը։

Այդ հարցին չի կարելի մոտենալ ձևական չափանիշներով։ Հարկավոր է հարցն ըստ երևույթան լուծել և ամեն անգամ նայած թե ում հետ գործ ունենա։

1. Գյուղապետից պիտի համարել քերթում գրող կոլտնտեսականներից նրանց, ովքեր ցանկանում են այս կամ այն չափով կապված լինել քերթի հետ և ովքեր շարունակ ոգնում են նրան։

2. Կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթի գյուղթղթակից պիտի համարել նաև այն կոլտնտեսականներին, ովքեր վորևե պատմառով դեռևս չեն կարողանում վարժ կերպով իրենց մտքերը շարադրել քերթի վրա, սակայն շարունակ իրենց մտքերը բանավոր կերպով հաղորդում են քերթին գրույցներով, խմբագրին և մյուս գյուղապետիցներին անձնապես հայտարարություներ անելով, — վորպեսզի իրենց մտքերը գրի առնվեն և իրենց անունից տեղավորվեն քերթում։

Կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի այս «բանավոր թղթակիցներին» հետ ալելի պակաս կապ չպիտի պահպանել, քան գրող գյուղթղթակիցների հետ։ Չպետք է նրանց հատուկ տնունով կոչել (թե՛ «դու բանավոր թղթակից ես»)։ Նրանց պետք է համարել ամենախիսկական գյուղթղթակիցներ (և այդպես էլ կոչել նրանց)։ Բոլոր գյուղթղթակիցներին հավասար նրանց ևս պետք է ժողովի հրավիրել։ Պետք է նրանց հրավիրել խմբի մեջ նիստին, վորոչակի աշխատանք հանձնարարել նրանց պատի թերթում կատարելու և այլն։ Դայց միաժամանակ նրանց պետք է ոգնել իրենց մտքերը հաղորդելու, վոր միայն բանավոր այլև գրավոր։

3. Գյուղապետից են համարվում նաև այն կոլտնտեսականները, ովքեր նոր են միայն սկսում քերթին գրել, ցանկանում են շարունակել գրելը, բայց բիչ են գրում և անհաշով իրենց անվորձության պատմառով։ Խմբագիրը և պատի թերթի խմբագրական կոլեգիան անպայման պետք է հատուկ հոգատարությամբ չըջապատեն այդպիսի գյուղթղթակիցներին։ Որինակ՝ կարելի չէ նրանց կցել խմբի մեջ անգամներին և փորձված գյուղթղթակիցներին, նրանց համար ստեղծել կիսապաշտպանության վերացման խմբակ, կամ նրանց տեղա-

Վորել կոլտնտեսութեան ընդհանուր խմբակում, նրանց՝ սգնություն ցույց տալու համար կցել ուսուցչին, ագրոնոմին կամ կոլտնտեսութեան ուրիշ կոլտուրական աշխատողներին:

4. Չպետք է գյուղօրօքակից համարել այն մարդկանց, ովքեր դեռևս վատ են աշխատում կոլտնտեսությունում: Այդ մարդկանց առաջ այսպիսի պայման պիտի դնել, յեթե դուք գրեք, իհարկե, մենք ուշադիր լսելու յենք ձեր տեղած ազդանշանները: Ձեր դանդաղները ևս մենք պետք է քննենք ու հետևենք: Սակայն մենք ձեզ մեր գյուղօրօքակից համարել չենք կարող, մինչև վոր դուք հարվածային չդառնաք: Այդ մարդկանց, յեթե նրանք ուղղվում են, պետք է միշտ, այսպես ասած, «ոեզերվում» պահել: Նրանց առաջով գյուղօրօքակից համարելով ոգնել հարվածայիններ դառնալու:

5. Անտարակույս չի կարելի գյուղօրօքակից համարել խորթ մարդկանց—յենթակույակներին, կույակներին, լողերին, գջողներին, չի կարելի տալ նրանց օրօքակցությունները: Իսկ յեթե նրանք կփորձեն մի կերպ պատի թերթի վրայից անցնել ու խցկվել չըջանային կամ կենտրոնական թերթերի մեջ, ապա հարկավոր է անմիջապես այդ մարդկանց մասին տեղեկացնել համապատասխան քերթերին, վորպեսզի նա այդ խորթ մարդկանց կողմից մոլորութեան մեջ չընկնի:

Կոլտնտեսություններում բոլորն թափով են առում առաջավոր մարդիկ: Այժմ իրավացիորեն նրանց ակնավոր մարդիկ են համարում: Այդ մարդիկ կյանքի մեծ փորձ ունեն. նրանք փորձ ունեն՝ համառ պայքար մղելու կոլտնտեսությունների կազմակերպման համար, փորձ ունեն՝ կազմա-

կերպչորեն տնտեսապես ամրապնդելու կոլտնտեսությունները, փորձ ունեն՝ պայքարելու իրենց կոլտնտեսությունում ունեւոր, կուլտուրական կյանք ստեղծելու համար: Այդ անվանի մարդկանց անպայման պետք է քաջել գյուղօրօքակցային շարժման մեջ և այնպես անել, վոր նրանք գրեն իրենց փորձի մասին և քննադատեն մյուս կոլտնտեսականների թերությունները: Վորքան թղթակիցների մեջ շատ լինեն այդպիսի անվանի մարդիկ— լավագույն կամ բայնավարներ, լավագույն տրակտորիստներ, լավագույն գոմապահներ, կթվորներ և այլն,— այնքան ավելի հեղինակավոր կլինի թղթակցական շարժումը, այնքան ավելի ամրակուռ կլինեն մեր կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերը, այնքան ավելի արագ մնացած գյուղթղթակիցները ևս կանցնեն կոլտնտեսությունների ամենաառաջավոր մարդկանց շարքերը:

Մեծ ուշադրություն պիտի դարձնել կոլտնտեսուհիների մասնակցությանը պատի քերթին: Հայտնի յե, թե ընկ. Ստալինը վորքան մեծ նշանակություն է տալիս կոլտնտեսուհիների մասնակցութեանը՝ կոլտնտեսությունների ընդհանուր աշխատանքներին: Հասկանալի յե, վոր խիստ կարեւոր է նրանց մասնակցությունը նաև պատի թերթի աշխատանքներին: Կոլտնտեսուհիներին պետք է գյուղօրօքակցային աշխատանքի մեջ քաջել վոչ միայն վորպես շարքային օրօքակիցներ, այլև անպայման վորպես ղեկավար աշխատողներ— վորպես բրիգադային ու կոլտնտեսային պատի քերթի խմբագիրներ, խմբիղի անգամներ, վորպես շրջանային ու կենտրոնական քերթերի օրօքակիցներ:

Սակայն բրիգադային կամ կոլտնտեսային յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր և գյուղթղթակիցների վողջ ակտիվը պետք է հիշեն, վոր

բավական չե գյուղթղթակից ներդրումելը, բավական չե հարվածային կոլտնտեսուհու մեջ ցանկություն արթնացնել՝ իր աշխատանքի ընթացքում ոգտագործելու գյուղթղթակցի գրիչը: Հարկավոր է նաև սովորեցնել նրան՝ լավ տիրապետելու այդ գրչին, հարկավոր է համառորեն ու անդադար բարձրացնել նրա ընդհանուր, քաղաքական ու գրական գրագիտությունը, ընդլայնել նրա մտահորիզոնը:

VI. ԳՅՈՒՂԹՂԹԱԿՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղթղթակիցը պետք է՝

1. իր ամբողջ աշխատանքի ընթացքում կիրառի կոմունիստական կուսակցության վորոչումներն ու այդ վորոչումները բացատրի նաև մյուս կոլտնտեսականներին:

2. Ակտիվորեն ոգնի կուսակցությանը՝ պաշտարելու դասակարգային թշնամու և նրա գործակալների մնացորդների դեմ: Կուլակներին ու նրանց գործակալներին քայքայիչ աշխատանքի դեպքում գյուղթղթակիցը չի կարող լուել: Նա պետք է համարձակ կերպով դուրս գա նրանց դեմ, ակտիվորեն մերկացնի թշնամու արարքները:

3. Հարվածայնորեն աշխատի կոլտնտեսուհիում, աշխուրջ պահպանի կոլտնտեսային բարիքը, առաջինը լինի պրոլետարական պետության հանդեպ իր պարտավորությունները կատարելու գործում, առաջինը կատարի կոլտնտեսության առաջադրանքները, ակտիվորեն մասնակցի տնտեսական-քաղաքան կամպանիաներին, կիրառի ագրոտեխնիկայի կանոնները, լավ նախաձեռնի իր մեքենան, իր հողամասը, իր ֆերման և այլն:

Բանգյուղթղթակիցը վոչ միայն մերկացնող,

այլև կազմակերպիչ պիտի լինի: Սակայն մասնաճիւղերի կազմակերպիչ լինել, նշանակում է միշտ և ամենուրեք անձնական որինակ ցույց տալ, վորն ումրապնդում է գյուղթղթակցի գրիչը:

4. Ակտիվորեն կենսագործի ընկ. Ստալինի ցուցումները՝ պահպանել յուրաքանչյուր ընդունակ ու հասկացող աշխատողի: Գյուղթղթակիցը պետք է պատի թերթում խրախուսի՝ ագրոտեխնիկան տիրապետած կոլտնտեսականներին, ոգնի նրանց՝ աճել, սովորել տիրապետել գործին, մեքենային:

Ընկերաբար քննադատելով կոլտնտեսականների սխալները՝ անհրաժեշտ է ամեն կերպ ոգնել ու խրախուսել նրանց նախաձեռնությունը և լավ աշխատանքը: Հարկավոր է, վոր յուրաքանչյուր գյուղթղթակից վարվի ախպես, ինչպես վորոչեց յերկաթուղային թերթերի խմբագիրներին վերջերս կայացած խորհրդակցությունը: Այդ խորհրդակցությունում յեղույթ ունեցավ ընկ. Կազանովիչը: Ընկ. Կազանովիչի ցուցումների հիման վրա խորհրդակցությունը մասնավորապես նչեց, վոր մամուլը տրանսպորտում յեղած թերությունների դեմ պետք է պայքարի վոչ թե ընդհանուր աղմուկով «խլացնելով» իր ընթերցողներին, վոչ ել մի ընդհանուր մակարդակի վրա դնելով բացահայտ սարոտածարարին ու ագնիվ մարդուն, վորը, սակայն չի կարողանում գրուխ հանել գործից իրրև հրամանատար կամ բանվոր: Յեթե խնդիրը վերաբերում է տրանսպորտի վերակառուցման գիտակցական թրչնամուն, նրան պետք է անողոքաբար մինչև վերջ մերկացնել, իսկ յեթե խնդիրը վերաբերում է միայն անմտահ, կասկածող մարդուն, նրան պետք է ուղղել, ոգնել, վոր վերջ տա իր կասկածներին և ուղղել նրա սխալները:

Միանգամայն պարզ է, վոր այս վորոչումը լիովին վերաբերում է նաև գյուղթղթակիցներին,

վորոնք նույնպէս իրենց քննադատութեան ընթացքում միեւնոյն մակարդակի վրա չպետք է դնեն կողմնակիցին գործի բացահայտ թշնամուն և այն մարդուն, վոր ժամանակավորապէս սխալվել է, ժամանակավորապէս հետ է մնացել, այն մարդուն, վորին կարելի չէ և պետք է ուղղել:

5. Թերթում նկարագրել կոլտնտեսութեան աշխատանքի կազմակերպման լավագոյն փորձը, ստախանովական կոլտնտեսականների աշխատանքը, թերթում բարձրացնել ամենաբազմապիսի հարցեր, վորոնց կարելի չէ հանդիպել աշխատանքի ընթացքում:

6. Անողորբար մերկացնել լողերին, գլխոյներին, կոլտնտեսային բարիքը հափշտակողներին, ցույց տալով, վոր նրանք իրենց վարմունքով ողորմում են կուլակներին ու նրանց գործակալներին:

7. Թերթում քննադատել կոլտնտեսութեան, բրիգադի, առանձին կոլտնտեսականի աշխատանքներում յեղած թերութիւններն ու սխալները, ուսումնասիրել թերութիւնների պատճառները և նրանց վերացման միջոցները:

8. Հետևել, վոր գյուղափոխակցի գրած խոսքը չտարբերվի նրա գործից. հակառակ դեպքում վոչ վոք նրան չի լսի ու չի հարգի: Դեպի իր քննադատութիւնը հարգանք կարող է ստեղծել միայն այն գյուղթղթակիցը, վորն ինքն ել ազնվորեն է աշխատում:

9. Գրել ճշմարիտը: Դրա համար գյուղթղթակիցը պետք է հիմնավորապէս ուսումնասիրի իր նկարագրած յերեւոյթը, թափանցի նրանց պատճառների մեջ, ստուգի փաստերը, թյուրիմացութեան մեջ չգցի թերթը և հնարավորութիւնը չտա նրանց, ովքեր ցանկանում են խաբել թերթերին և զրպարտել վորեւէ մեկին:

Գյուղթղթակիցը պետք է պատասխանատուութիւն զգա իր գրած նամակի, թղթակցութեան համար: Պետք է այնպէս անել, վոր նա ճշմարտութիւնն աղավաղող կամ նույնիսկ անճիշտ թղթակցութիւններ չունենա: Այդ պարագայում է թղթակցի և այն թերթի հեղինակութիւնը, վորին նա թղթակցում է:

10. Ուսումնասիրի իր գործը, իր գործին վերաբերող գրականութիւնը կարգա, վորպէսզի առաջին շարքերում լինի, վորպէսզի չխոսի ոչինչ բանի մասին, ինչ վոր չգիտէ, վորպէսզի ավելի լավ մերկացնի դասակարգային թշնամուն:

11. Բարձրացնի իր քաղաքական, ագրոտեխնիկական ու ընդհանուր գրագիտութիւնը, վորպէսզի գյուղթղթակցի գրիչն ավելի սուր դարձնի:

12. Թե՛ մտմուլում և թե՛ առանձին բանավոր յերեւոյթներում միշտ արտահայտի վոչ թե հետամնաց տրամադրութիւններ, այլ լավագոյն հարվածայինների, ազնիվ կոլտնտեսականների առաջավոր մտքերը: Չենթարկվի զանազան խորթ աղեցութիւնների, այլ, ընդհակառակն, համարձակուրեն դեմ դուրս դա ամեն տեսակի հետամնաց տրամադրութիւններին: Ըստ վորում գյուղթղթակիցը պետք է իր հարեանների ու ընկերների վրա ազդի համոզելով ու անճնական քրիմակով և վոչ թե սպառնալիքներով, վոչ թե գողգողոցով ու անպատվելով: Գյուղթղթակիցն իր աշխատանքի ընկերոջ մերձավոր խորհրդատուն պիտի լինի, պետք է բաժանի նրա և՛ ուրախութիւնը, և՛ տխրութիւնը և խմանա նրա կարիքները:

VII. ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վոչ մի բանակ, ինչպես ընկ. Ստալինն է ասում, չի կարող առանց փորձված շտաբի յուր զնալ, յեթե նա չի ուզում իրեն պարտության մատնել: Աչխատավորության համար այդպիսի շտաբ ե հանդիսանում լենինյան-ստալինյան կուսակցությունը, վոր իր գոյության բոլոր արժատներով սերտորեն կապված ե աշխատավորության հետ: Այդ կուսակցությունն ապահովում ե այնպիսի դրություն, վոր աշխատավորության բոլոր բազմաթիվ կազմակերպություններն իրենց աշխատանքը տանում են միևնույն ուղղությամբ:

Բանդյուղթղթակցական շարժումը մեր յերկրում հաջողությամբ ե զարգանում նրա համար, վոր այդ շարժումը շարունակ ղեկավարել ու ղեկավարում ե կոմունիստական կուսակցությունը, վորը հենց սկզբից խոչորագույն ուշադրություն ե նվիրել բանդյուղթղթակցական շարժմանը և մեծ հոգատարություն ե հանդես բերել դեպի բանդյուղթղթակիցները:

Մեր յուրաքանչյուր հեռակայող պետք ե լավ յուրացնի կուսակցության կարևորագույն վորոշումները բանդյուղթղթակիցների մասին: Դրա համար ել մենք կանգ կառնենք այդ վորոշումների գեթ համառոտակի բնորոշման վրա:

Դեռևս 1923 թվին կուսակցության 12-րդ համագումարը նչեց, վոր «վիթխարի յե խորհրդային ժուրնալիստիկայի գծով կուսակցության նոր ուժի բանվոր քաղաքակիցների նշանակությունը: Ինչպես կենտրոնում, այնպես և տեղեյում կուսակցական կազմակերպությունները պետք ե միջոցներ ձեռք առնեն բանքաքաղաքակիցների քաղաքական յուսավորա-

թյան ուղղությամբ, նրանց համախմբելու և ընդհանուր կուսակցական աշխատանքի մեջ ներգրավելու ուղղությամբ»:

Կուսակցության 13-րդ համագումարը (1924 թվին) ավելի մանրամասն կանգ առավ բանդյուղթղթակիցների կուսակցական ղեկավարության կարևորագույն խնդիրների վրա: Համագումարը բոլոր կուսակցական կազմակերպություններից պահանջեց. «ամեն կերպ ամրապնդել բանքաքաղաքակիցների ինստիտուտը, խնամքով պահպանելով նրանց վորևե տեսակի կազմաչափային ու բյուրոկրատիզմից»: Համագումարի ցուցումների համաձայն կուսակցության ուղեւորությունն ու ղեկավարությունը բանթղթակցային շարժմանը պիտի կայուն հետեյալում՝ «բանքաքաղաքակիցների կոմունիստական դաստիարակության ուժեղացումը, քերթերին ոգնելը՝ բանքաքաղաքակիցներ ջոկելու գործում, բանքաքաղաքակիցների մեջ քաղ-յուսավորական աշխատանք կազմակերպելը (խմբակներ, ակումբներ, կարմատե կուրսեր, համագումարներ և այլն) և նրանց բանքաքաղաքակցային վորակի բարձրացմանն ու ժանդակելը»:

Բանդյուղթղթակիցների նշանակությունը հիշվեց նաև կուսակցության հետագա համագումարներում: Վերջին՝ 17-րդ համագումարում ընկ. Ստալինը նչեց բանդյուղթղթակցական շարժման խոշոր դերը սոցիալիզմի կառուցման գործում:

Բացի համագումարների վորոշումներից կուսակցությունը բանդյուղթղթակիցների ղեկավարության մասին բազմիցս ցուցումներ ե տվել նաև իր կենտրոնական կոմիտեյի հատուկ վորոշումներով: Համ.կ(բ) կենտկոմի 1925 թվի հունիսի 1-ի վորոշման մեջ նշվեց, թե՝ հիմնական խնդիրն ե՝ քաղաքականապես դաստիարակել բանվոր ու գյուղացի թղթակցին: Այդ նույն վորոշումով կուսակ-

ցության կենտրոնական կոմիտեն նախատեսեց՝ «Իրենց շարժման փորձի ընդհանրացման և համամիութենական մասշտաբով բանգյուղափոխիցների աշխատանքի ընդհանուր ղեկավարության համար «Պրավդա» թերթին կից հրատարակվում է ղեկավար ժուռնալ».—«Ռաբոչե-կրեստյանսկի կորբեսպոնդեմո»:

Կուսակցության կենտրոնական կոմիտեյի 1926 թվի ոգոստոսի 27-ի վորոչման մեջ նշվեց, վոր սկզբնական կուսակցական կազմակերպությունները «Պետք է ձեռնարկություններում ու գյուղերում նպաստեն բանգյուղափոխիցների ու պատի թերթերի աշխատանքի համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն, նրանց հալածանքից պաշտպանելուն, բանգյուղափոխական շարժման ելությունը բանվորների և գյուղացիների լայն խավերին բացատրելուն, բանգյուղափոխիցների փոխակցություններով մերկացրած տեղական աշխատանքի թերությունների ֆեմությանն ու վերացմանը»: Այդ վորոչման մեջ կենտկոմը նշեց, վոր բանգյուղափոխական կազմակերպությունների ղեկավարությունը պետք է իրագործվի այդ կազմակերպություններում աշխատող կոմունիստների միջոցով, վոր ստորին կուսկազմակերպությունները պետք է բանգյուղափոխական ղեկավարությունը մտցնեն տեղական կազմակերպությունների ղեկավարության իրենց ընդհանուր պլանի մեջ, սխտեմատիկաբար լսեն պատի թերթերի խմբելուների մեջ մտնող կուսակցության անդամների ղեկուցումը, ինչպես և քննարկեն բանգյուղափոխական շարժման հերթական խնդիրները:

Կուսակցության կենտկոմի «Գյուղական-չրջանային և ստորին մամուլի մասին» վորոչման մեջ (1931 թ.) ընդգծվեց, վոր «չրջանի ստորին մամուլն ու աշխատանքը բանգյուղափոխիցների մեջ

պետք է ղեկավարեն կուսակցության շրջումները, ակտիվ մասնակցության մեջ փաշելով կուսաօրհաններին ու շրջանային թերթերի խմբագրություններին»: 1931 թվի ապրիլի 16-ի «Բանգյուղափոխական շարժման վերակառուցման մասին» վորոչման մեջ կուսակցության կենտրոնական կոմիտեն նշեց, վոր կուսկազմակերպությունների խնդիրն է՝ «ուժեղացնել բանգյուղափոխական շարժման կոմկրետ ղեկավարությունը՝ նրա խնդիրները դիֆերենցիալաբար յեթարկելու տեսանկյունով՝ համապատասխան արդյունաբերության ու գյուղատնտեսության առանձին բնույթի (միանման ձեռնարկությունների բանգյուղափոխիցների խորհրդակցություններ ու հավաքներ, աշխատանք առանձին պրոֆեսիայի բանգյուղափոխիցների մեջ, թերթերի աշխատանքի պլանի ֆեմարկում բանգյուղափոխիցների հետ և այլն):

Մենք թվեցինք բանգյուղափոխիցների կուսակցական ղեկավարության խնդիրների մասին կուսակցության վորոչումների մի մասը միայն: Սակայն այսքանից ել պարզ է, թե կուսակցությունն ինչքան մեծ նշանակություն է տալիս բանգյուղափոխիցների դադափարական-քաղաքական դատարակության դործին, ինչպես մեծ հողատարակություն է ցուցաբերում կուսակցությունը բանգյուղափոխիցների ու գյուղափոխիցների քաղաքական աճման խնդրին:

Դրա համար ել խորապես սխալվում են այն կոմունիստներ, կուսկազմակերպիչները, վորոնք գյուղափոխիցների մեջ կատարվելիք ամբողջ աշխատանքը դրոմ են միմիայն պատի թերթերի խմբագիրների ուսերին: Վորոչ կուսկազմակերպիչներ կարծում են, թե գյուղափոխիցների մեջ աշխատանք կատարելն իրենց դործը չէ: Այդ տեսակետը վնասակար է, վոր կուսակցական և վոր

բուլչեիկյան: Կուսակազմակերպիչը պետք է հասկանա, վոր իր խնդիրն է՝ ամենորոյա ոգնություն ցույց տալ գյուղթղթակիցներին՝ վորպես կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ակտիվ ոգնականի:

Այստեղ չափ քան է կախված նաև հենց պատի թերթի խմբագրից, վորը պետք է պահանջի իր կուսակազմակերպութեանից, վոր նա համարի գյուղթղթակիցներին, զրույց ունենա նրանց հետ, ոգնի նրանց աշխատանքին, պաշտպանի նրանց հալածանքներից, ապահովի թղթակցութեանների ներգործութեանը:

Գյուղթղթակիցների կուսակցական ղեկավարութեանը նրանց գաղափարական ոգնութեան ցույց տալն է: Չի կարելի գաղափարական ոգնութեանը փոխարինել վարչարարութեամբ, գյուղթղթակիցների թղթակցութեանների գրաքննութեամբ և սրանց նման միջոցներով: Դա կլինի վոչ թե ղեկավարութեան, այլ կուսակցութեան ցուցումների ազդեցութեամբ: Ղեկավարել՝ նշանակում է համոզել, դաստիարակել, ուղղութեան տալ գյուղթղթակիցների աշխատանքին, ուղղել սխալները, խրախուսել գյուղթղթակիցների քննադատութեանն ու ինքնաքննադատութեանը, ոժտնադակել գյուղթղթակիցների նախաձեռնութեաններին: Կուսակցութեանը բազմիցս նախադրուչաբեր է կուսակազմակերպութեաններին՝ գյուղթղթակիցների ու պատի թերթերի նկատմամբ վարչարարութեան անելուց: Համոզելու մեթոդը կուսակցութեան ղեկավարութեան հիմնական մեթոդն է: Գյուղթղթակիցների կուսակցական ղեկավարութեանը ճիշտ կարգավորելիս այդ յերբեք չի կարելի մոռանալ:

VIII. ԽՄԲԱԳՐԻ ԿԱՊԸ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Պատի թերթի խմբագրի կողմից գյուղթղթակիցների մեջ կատարվող աշխատանքներում չի կարելի թույլ տալ, վոր յուրաքանչյուր թղթակից թողնված լինի ինքնազուկ: Գյուղթղթակցին պետք է դաստիարակել:

Դրա համար պատի թերթի խմբագիրը պետք է հաշվի առնի և ուշադրութեամբ կենտրոնում ունենա իր յուրաքանչյուր գյուղթղթակցին: Նա պետք է իմանա, թե գյուղթղթակիցն արտադրութեան մեջ ինչ աշխատանք է կատարում, ինչպես է աշխատում, զբաղվում է ընթերցանութեամբ, սովորում է վորևէ տեղ, քաղաքական ու կուլտուրական ինչ մակարդակի վրա յե գտնվում, ինչ բան է հետաքրքրում նրան: Այդ իմանալով՝ յուրաքանչյուր գյուղթղթակցի իրեն համապատասխան աշխատանք պիտի հանձնարարել պատի թերթում (յենթադրենք՝ շարունակ հետևի աշխատանքի այսինչ բնագավառին, ավելի խոր ուսումնասիրի կորտնտեսութեան կամ բրիգադի համար, հետևապես և պատի թերթի համար կարեոր մի վորոշ խնդիր): Այդպիսի գյուղթղթակիցը միշտ էլ ավելի հեշտութեամբ նյութ կգտնի վորոշ հարցի մասին:

Խմբագիրն ու խմբիչը կուսակազմակերպչի ոգնութեամբ պետք է հոգ տանեն, վոր յուրաքանչյուր գյուղթղթակից անպայման վորևէ տեղ սովորի: Նայած թե ով ինչ բանում է հետ մնում, ով ինչով է հետաքրքրվում՝ հարկավոր է գյուղթղթակիցներից վրձանց ուղարկել ստորին քաղաքացիներ, վրձանց՝ կուսխորհրդային զարոց:

Գյուղթղթակիցներին պետք է ուղարկել նաև տեխնիկական դասընթացներ, կիսադրագիտության վերացման խմբակներ և այլն: Պատի թերթի խմբագիրն անձամբ պիտի հետաքրքրվի այդ կարևորագույն գործով, իմանա, թե գյուղթղթակիցներից ով է աւելորում, ում հարկն է՝ ի որ հուրդ տա կարգալ այս կամ այն գիրքը: Ինքը՝ խմբագիրն ու խմբկուլի անդամները պետք է որինակ հանդիսանան այդ գործում, այսինքն՝ իրենց պետք է լավ աւելորեն:

Յուրաքանչյուր առանձին գյուղթղթակցի հետ աչխատելիս չի կարելի հույս դնել, թե ինքը թղթակիցը վորեն բան կնկատի ու կգրի: Հարկավոր է գյուղթղթակցին ոգնել, վորպեսզի յուրաքանչյուր թղթակից կարողանա իր նախաձեռնությամբ պատի թերթում գրել, կարևոր հարցեր բարձրացնել, արժեքավոր առաջարկություններ անել:

Հարկավոր է ժամանակ առ ժամանակ գյուղթղթակցին քեմաներ (հարցեր) քեյադրել, վորոնց մասին պատի քերքը նրանից նյութ է սպասում—նվաճումների կամ գործի տապալման մասին անմիջապես ահազանգում է սպասում: Վորոչ խմբագիրներ մի շատ լավ միջոց են կիրառում. նրանք յերբեմն—յերբեմն գալիս են գյուղթղթակցի մոտ՝ հենց արտադրության մեջ, այդ գյուղթղթակցի հետ զիտում են արտադրության այդ աչխատամասը, ուսումնասիրում են նրա նվաճումներն ու թերությունները, պարզում են նրանց պատճառները, փաստեր են հավաքում և գյուղթղթակցի հետ միասին մի թղթակցություն են գրում:

Լավ չե, յերբ խմբագիրը ձեականորեն, մեխանիկորեն տվյալ գյուղթղթակցին պատվեր է տալիս թե՝ «գրի՛ր այսինչ բանի մասին»: Իսկ յեթե այդ թղթակիցը մի վորեն ուրիշ հետաքրք

րիր նյութ ունի՞: Իսկ յեթե նա մտածել է գրել իրեն հետաքրքրող վորեն ուրիշ բանի մասին: Այս հանգամանքն անպայման պետք է հաշվի առնել, յերբ գյուղթղթակցին առաջարկում են գրել: Որինակ՝ շատ լավ կլինի գյուղթղթակցի հետ զրուցել այս կամ այն հարցի մասին և հետո միայն պայմանավորվել, վոր նա չոչափած հարցի մասին մի թղթակցություն գրի:

Այդ տեսակետից յուրաքանչյուր խմբագիր կարող է որինակ վերցնել Լենինից, յերբ նա խմբագրում եր բուլեիկյան առաջին թերթերը «Իսկրա»-ն և «Վպերյոդ»-ը: Ահա, որինակ, ինչ է պատմում ընկ. Կրուպսկայան.

«Հետաքրքիր է նշել, թե Վլադիմիր Իլյիչն ինչպես եր մոտենում այն հեղինակներին, վորոնք աչխատում եյին «Իսկրա»-յում: Նա շատ տակտով եր մոտենում: Պատահում եր, հեղինակը վատ հոգված եր գրում. Վլադիմիր Իլյիչը հեղինակին չեր ասում, թե այդ հոգվածը բանի պետք չե, այլ շատ մեղմորեն հեղինակին. «Իսկ դուք չե՞ք կարդիմում եր հեղինակին. «Իսկ դուք չե՞ք կարծում, վոր այս հարցին պետք է մոտենալ, վոր այս հարցին պետք է մոտենալ, վոր այսինչ տեսակետից: Իսկ ձեզ չի՞ թվում, վոր այս մասը պետք է ընդարձակել» և այլն: Վլադիմիր Իլյիչը վոչ միայն քննադատում եր, այլև ցույց եր տալիս, թե ինչպես պետք է անել: Յուրումներից հետո նա հոգվածը տալիս եր հեղինակին, վոր ինքը վերափոխի: Յեղ հաճախ հեղինակը հիմնովին, անձանաչելիության չափ վերամշակում եր իր հոգվածը»:

Իսկ յերբեմն,—պատմում է ընկ. Կրուպսկայան, պատահում եր և այսպես.

«Վլադիմիր Իլյիչը նկատի յեր առնում, վոր այսինչ հեղինակը պետք է գրի այսինչ

հողմածը: Սակայն նա միանգամից չեր առաջարկում գրել, այլ նախապես սկսում էր այդ ընկերոջ հետ խոսել այդ նյութի շուրջը և մանրամասն քննարկել այն: Հեղինակը խոսում էր տաքացած: Վլադիմիր Իլյիչը զարգացնում էր թեման, լուսաբանում էր այն բոլոր կողմերով: Թվում էր, թե նրանք սովորական զրույց են անում: Իսկ դրանից հետո հանկարծ Վլադիմիր Իլյիչը հարցնում է. «Գուցե դուք այդ թեմայի մասին կգրե՞ք»: Յեվ հետո ընկերը գրում է և յերբեմն գրում է հենց Վլադիմիր Իլյիչի բառերով»:

Ահա այսպես կարող է վարվել յուրաքանչյուր խմբագիր:

Որտակար է նաև յերբեմն յերբեմն քղթակցի հետ ֆնուր-յան առնել նրա քղթակցութունները, վերլուծել այն, պարզելու համար, քե վորքան ֆաղաֆականապես գրագետ է այդ քղթակիցը, վորքան զգուն է դասակարգայնորեն, վորքան է ուշիմ և ուշադիր դեպի իր շրջապատում տեղի ունեցող լավն ու վատը:

Գուցե և հարկ լինի, վոր խմբագիրը վոչ թե մեկ-յերկու, այլ մի քանի անգամ թղթակցություն գրի այդ թղթակցի հետ, վորպեսզի նա գործնականում սովորի գրելը: Չկա ավելի վատ բան, քան այն, վոր ղեկավարը միմիայն «ընդհանրապես» խոտակցություններով «խթանել» է կարգանում և վոչ թե ձգտում է գործնականում ցույց տալ, թե ինչպես պիտի աշխատել:

Առանձնապես մեծ նշանակություն ունի գյուղթղթակցի հետ միասին նրա քղթակցությունն ուղղելը: Շատ հաճախ պատահում է, վոր անսիրտ գյուղթղթակիցները անհաջող են գրում պատի թերթի համար: Յենթագրե՞նք՝ մի թղթակցություն է գրում նվաճումների մասին,

սակայն ամբողջն ընդհանուր բառերով: Հասկանալի չէ, թե վորն է նրա նկարագրած նվաճումը: Կամ, ասենք թե մերկացնող թղթակցություն է գրել, բայց այնպես է գրել, վոր թերթում տեղավորել չի կարելի. այնտեղ բավականաչափ ապացույցներ ու փաստեր չկան, մեղադրանքն ստուգված չէ:

Ինչպե՞ս վարվել նման դեպքերում:

Կան խմբագիրներ, վորոնք այդպիսի թղթակցություններն ուղղակի անպետք են գտնում ու մի կողմ գցում: Այդ ճիշտ չէ: Շատ ավելի լավ էն վարվում այն պատի թերթի խմբագիրները, վորոնք այդպիսի դեպքերում անսլոյման գրում են դյուղթղթակցի հետ, պարզում են գործի ցում են դյուղթղթակցի հետ, պարզում են գործի միասին ուղղում են թղթակցությունը, ստուգում ու հետազոտում են փաստերը, լրացնում են թղթակցությունը:

Ընդհանրապես, յերբ գյուղթղթակիցը մի թղթակցություն է բերում, պատի թերթի խմբագիրը պետք է տեղն ու տեղը կարգա այդ թղթակցությունը: Յեթե թղթակցությունը կասկած է հարուցում, պետք է այդ մասին գյուղթղթակցին և հարուցում, պետք է այդ մասին գյուղթղթակցին ասել, պարզել նրան, գուցե նա ճիշտ բան է ասում, բայց թույլ է գրում: Իսկ յեթե նրա թղթակցությունն իրոք ճիշտ չէ, ապա այդպիսի թղթակցին պետք է մի լավ քննադատել: Չի խանգարի այդպիսի սխալները հետո քննարկել մյուս գյուղթղթակիցների հետ, վորպեսզի այդպիսի որինակներով դաստիարակվեն բոլոր գյուղթղթակիցները:

Բոլոր մեր ասածներից պարզ է, վոր խմբագիրը շարունակ պետք է հանդիպի իր բոլոր ակտիվիստների հետ, վոչ միայն բոլորի հետ միամիտ (հավաքներում, ժողովներում), այլ և

իր յուրաքանչյուր քղթակցի հետ ել առանձին պետք է հանդիպի, գրույց ունենա:

IX. ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ

Մենք խոսեցինք այն մասին, թե պատի թերթի խմբագիրն ինչպես պիտի աշխատի յուրաքանչյուր առանձին թղթակցի հետ: Սակայն բացի այդ աշխատանքը, հարկավոր է կարգավորել նաև տվյալ կոլտնտեսության կամ բրիգադի գյուղ-քղթակիցների մեջ կուկտիվ աշխատանք կատարելու գործը:

Ինչո՞ւ է այդ կարևոր այդ:

Վորովհետև կուկտիվ աշխատանքն անհրաժեշտ է պատի թերթի աշխատանքի բարելավման համար, յուրաքանչյուր գյուղթղթակցի աճման համար:

Այդպիսի կուկտիվ աշխատանքի ձևերից մեկն է հանդիսանում գյուղ-քղթակիցների և թերթում գրող մյուս կոլտնտեսականների ժողովը:

Սակայն, ի՞նչ պիտի անել այդ ժողովներում, փորպեսզի նրանցից ոգուտ ստացվի:

Լավ են վարվում այն կուկտիվները, որոնք ամսական մեկ-յերկու «գյուղ-քղթակցի օր» են կազմակերպում: Վերպես կստանան, այդ օրերին խմբելով գյուղթղթակիցներին հավաքում է՝ ըստ վորոշակի կարգի ու պլանի: Նախապես նշվում է, թե ինչպես պիտի անցկացվի «գյուղթղթակցի օրը»: Այդ օրվա աշխատանքին ակտիվ մասնակցություն են ունենում կուկտիվներակցիչը, կոլվարչությունն նախագահը և գյուղխորհրդի նախագահը:

Գյուղթղթակիցների ժողովին կարելի է ա-

մենաբազմազան ու հետաքրքիր աշխատանք կատարել: Ահա թե ինչպիսի՝

ա) Քննարկել խմբելու կազմած պատի թերթի պլանը կամ վորոշ կամպանիայի պլան: Այդպիսի ժողովը կարելի է դարձնել գործնական և մեծ ոգուտ ստանալ: Թող ներկա յեղող բոլոր գյուղթղթակիցները այսպես ասած ուղեղները շարժեն, մասնակցեն պլանի քննարկմանն ու քննադատությունը, առաջարկություններ մտցնեն: Թող հենց այստեղ յեղույթ ունենան կոլվարչությունն նախագահը, գյուղխորհրդի նախագահը, կուկտիվներակցիչը: Նրանց յեղույթները գյուղթղթակիցներին կոչեն պարզաբանելու իրենց հետաքրքրող հարցերը:

բ) Քննադատել պատի թերթի մեկ կամ մի փանի լույս տեսած համարներ: Այդ ևս կուկտիվ աշխատանքի և ուսուցման մի ոգտակար ձև է: Կարելի է մի ժողովում միացնել և պլանի քննարկումը և պատի թերթի նախորդ համարի քննադատությունը: Միայն պետք է հոգ տանել, վոր իր ժամանակին՝ ժողովն սկսելուց առաջ պատի թերթի համարները կախվեն պատից: Լավ կլինի նաև նախապես յերկու-յերեք ընկերոջ հանձնարարել, վոր նրանք առաջուց թերթին ծանոթանան և ժողովում սկսեն նրա քննադատությունը:

գ) Քննարկել գյուղ-քղթակիցների հաշվետվությունը՝ իրենց կատարած աշխատանքների մասին: Սակայն հարկավոր է, վոր այդ հաշվետվությունները կամավոր կերպով տրվեն և վոր թե հարկադրաբար:

դ) Քննարկել խմբելու հաշվետվությունը՝ վորոշ ժամանակամիջոցում իր կատարած աշխատանքների մասին (թերթի այժմեականությունը, վորքան է հաճախակի լույս տեսել այն, կապը

մասսաների հետ, մասսայական աշխատանքը, թղթակցությունների գործունեությունը, ով ուշագրություն չի դարձնում թղթակցությունների վրա և ինչու)։ Խմբկողի հաշվետվությունը պետք է հրավիրել բոլոր կուտնտեսականներին։

Գյուղթղթակիցների ժողովներում պետք է՝ ա) ֆիննարկել կուտակցության ու կառավարության վերջին վորոշումները՝ նրանց նշանակությունը պարզաբանելու համար և քննարկել, թե պատի թերթում ինչպես պիտի լուսաբանվի կուտակցության առաջադրած հարցը։

բ) Գյուղաթղթակիցներին ծանոթացնել կուտնտեսային այս կամ այն կազմակերպության աշխատանքին (կողմարչության նախագահի գրույցը, գյուղխորհրդի նախագահի գրույցը, բրիգադի գրույցը)։ Այդպիսի ժողովներում պետք է ամրապնդել գյուղթղթակիցների ու տեղական կազմակերպությունների ճիշտ փոխհարաբերությունները, վորպեսզի վերջիններս զնահատեն ու հարգեն գյուղթղթակցական քննադատությունը, իսկ գյուղթղթակիցները գործարար քննադատություն անեն։

Դրա համար եւ պատի թերթերի խմբկողներին կից և կուտակողմակերպության ղեկավարությունը պետք է հաճախակի ժողովներ գումարել գյուղաթղթակիցների և տնտեսական աշխատավորների հետ միասին։

գ) Փննարկել «Պրավդա»-յում, «Կրեստյանսկայա գազետա»-յում և հանրապետական ու շրջանային թերթերում լույս տեսած առավել հետաքրքիր հոդվածներն ու այլ նյութերը։

դ) Կույեկտիվ ձևով կարդալ «Ռաբոչե-կրեստյանսկի Կորրեսպոնդ.»», «Սելկոր» ժուռնալներում

և տեղական ժուռնալներում ու բանգյուղթղթակցային թերթերում լույս տեսած նյութերը։

Ինչպես այս բոլոր որինակներից տեսնում ենք, թղթակցական ժողովները կարելի չէ այնպես կազմակերպել, վոր յուրաքանչյուր գյուղաթղթակցի համար դրանք լավագույն դպրոց լինեն։

Հարկավոր չէ ծանրաբեռնել այդպիսի ժողովների որակարգը։ Յուրաքանչյուր ժողովը պետք է նվիրել վորևէ մեկ հարցի և այն ժամանակ յուրաքանչյուր ժողով նոր ու հետաքրքիր կլինի։

Նորից հիշեցնում ենք, հարկավոր չէ գյուղթղթակիցների դռնփակ ժողովներ գումարել։ Հարկավոր է հրավիրել բոլոր հետաքրքրվող կուտնտեսականներին, նրանց լայնորեն տեղյակ դարձնել ժողովի օրվան ու վայրին, որակարգին։

X. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատի թերթի խմբագիրն ու խմբագրական կույեգիան նույնպես պետք է աշխատեն գյուղթղթակիցների համար ինքնադարձացման խմբակներ կազմակերպել։

Առանձնապես ոգտակար է, յերբ բանգյուղաթղթակիցները 3-5 հոգով հավաքվում են ուսումնասիրելու բանվորական կամ կուտնտեսային կյանքի այս կամ այն նյութը, գործարանի կամ կուտնտեսություն այս կամ այն աշխատանքի բնագավառը։ Այսպես որինակ՝ վերջերս Մոսկվայի «Կրասնի Բոդատիր» գործարանում հինգ թղթակից, կուտակցության չրջկոմի կողմից գործարանային թերթին կցված ընկերոջ գլխավորությունը, կազմեցին մի խմբակ՝ ուսումնասիրելու համար իրենց գործարանը։ «Ճանաչել մեր գոր-

ծարանը» այսպես բնորոշեցին այդ ընկերներն իրենց խմբակի խնդիրը: Այդ ընկերները կոչվե-
տիվ կարգով վերցնում են իրենց գործարանի
հրատապ խնդիրները, նախ խորապես ուսումնա-
սիրում, վորպեսզի հետո հաջող կերպով հանդես
գան թերթում:

Ահա թե այդ խմբակի առաջին փորձի մա-
սին ինչ է պատմում նրա ղեկավար ընկ. Բուրովը
«Պրավդա»-յին կից հրատարակվող «Ռաբոչե-կրես-
տյանսկի կորրեսպոնդենտ» ժուռնալում (№ 20).

«Մեր առաջին զրույցը յեղավ խմբակի
խնդիրների մասին, այն մասին, թե մենք ինչ
պիտի անենք խմբակում: Այդ նույն պարապ-
մունքի ժամանակ մենք վորոշեցինք, վոր
խմբակի անդամներից յուրաքանչյուրը պետք
է «որագիր» կազմի: Բացի այդ մենք վորո-
շեցինք ունենալ նաև «խմբակի որագիր»:

... Յես իմ խմբակին սովորեցնում եմ
սխտեմատիկաբար հետևել «Պրավդա»-յին,
հետևել, թե ինչպես «Պրավդա»-ն շարունակ
վորոնում, գտնում ու համարյա յուրաքան-
չյուր համարում նոր, որվա հրատապ հար-
ցեր է գնում:

Խմբակն սկսեց խոր կերպով ուսում-
նասիրել գործարանում խոտան արտադրանք
տալու պատճառները: Մենք առանձին խոշոր
բնագավառներ առանձնացրինք, վորպեսզի
խմբակի անդամներն այդ բնագավառներն
ուսումնասիրեն և գործարանային թերթում
լուսարանեն: Առաջիմ վերցրել ենք յերկու
հարց: Նախ՝ սինթետիկ կաուչուկի յուրաք-
ման հարցը: Ընկ Իվանովին հանձնարարե-
ցինք ուսումնասիրել սինթետիկ կաուչուկի
հարցը, իսկ ընկ. Վորոնինին՝ խոտանի
պատճառները: Ընկ. Ֆրոլովին հանձնարարե-

ցինք ուսումնասիրել կենցաղային հարցերը
և կուլտուրական աշխատանքի վիճակը գոր-
ծարանում: Միաժամանակ մենք խորհուրդ
տվինք, վոր նրանցից յուրաքանչյուրն եւ իր
չուրջը համախմբի մի հինգ ընկեր»...

Յեւ ահա, որինակ՝ ընկ. Ֆրոլովը կազմա-
կերպեց բանթղթակիցների մի բրեդադ, վորն
սկսեց ուսումնասիրել բանվորների հանրակացա-
րանների նախապատրաստությունը ձմեռվան,
բնակարանների վիճակը, բանվորների սպասար-
կումը և այլն: Պարզ է, վոր այսպիսի խմբակա-
յին աշխատանքը խմբակի յուրաքանչյուր անդա-
մին ոգնում է զարգանալու: Ահա թե խմբակի
մասին ինչ է ասում նրա անդամներից մեկը՝ բան-
թղթակից ընկ. Վորոնինը.

«Աշխատելով այդպիսի խմբակում՝ մենք
բարձրացնում ենք մեր վորակը: Խմբակում
մենք միայն թղթակցություն գրելու տեխնի-
կան չեն, վոր սովորում ենք: Չե՞ վոր գլխա-
վոր խնդիրն է՝ գաղափարապես աճել:

Ահա որինակ՝ յես մտածեցի գրել խոտանի
մասին: Առաջ յես այսպես կգրեյի. — ահա,
մեզ մոտ խոտան կա: Այդ խայտառակու-
թյուն է, մեղավորներին պետք է պատասխա-
թյուն կանչել: Բայց խմբակն ինձ
սովորեցնում է ավելի խոր մտոեմալ հարցին:
Նախքան խոտանի մասին թղթակցություն
գրելս յես մի նայեցի, թե մեզ մոտ խոտանի
ինչ տեսակներ կան, ինչ հանգամանքներ են
խոտանի պատճառ դառնում, ով է մեղավոր»:

Այսպես կարող են անել նաև գյուղթղթա-
կիցները: Ասենք թե մի քանի գյուղթղթակից-
ներ առանձնապես շատ են հետաքրքրվում սերմի
ռեյեկցիայի հարցով: Ինչո՞ւ, ուրեմն, նրանք
չմիանան այդ հարցն ուսումնասիրելու համար,

միասին չկարգան այս կամ այն գրականությունը, զբույցներ չկազմակերպեն ագրոնոմի հետ, կապ չստեղծեն սելեկցիոն կայանի հետ:

Առանձին հարցերի այսպիսի բրիգադային ուսումնասիրությունը չափ ոգտակար է: Այդ փորձն այլ միջոցից ավելի լավ կարող է գյուղթղթակցին ոգնել՝ լուծելու իրեն հաճախ հուզող հարցը — ինչպես գրել: Հարցերն ավելի խոր ուսումնասիրել, աշխատել կոլեկտիվ կարգով — հաճախ ինչ պիտի անի գյուղթղթակիցը:

Մի ժամանակ մեր մամուլը հաճախակի ու մեծ մասշտաբով ռեյդեր էր կազմակերպում: Այժմ ևս այնտեղ, ուր հարկավոր է, կարելի չէ և պետք է կազմակերպել այդպիսի ռեյդեր, այսինքն՝ գյուղթղթակիցների բրիգադներով ստուգել այս կամ այն վորոշման կենսագործան ընթացքը: Սակայն ռեյդերը պետք է կատարել լրջորեն, անպայման խոր կերպով ուսումնասիրելով ստուգվող խնդիրները և թափանցելով գործի տեխնիկայի մեջ: Չպետք է հապճեպ ռեյդեր կազմակերպել: Հարկավոր է այնպես կազմակերպել, վոր յուրաքանչյուր ռեյդին առիթ դառնա, վոր գյուղթղթակիցներն ուսումնասիրեն աշխատանքի վորոշ բնագավառ և այդ ռեյդը գյուղթղթակիցների սովորեցնի քափանցելու գործի խորքերը և ավելի լավ գրել:

Կոլեկտիվ կերպով աշխատելով լավ թղթակցություն գրելու վրա՝ գյուղթղթակիցը կսովորի լավ գրել վոր միայն կոլեկտիվի հետ, այլև անհատորեն:

Այդ գյուղթղթակիցների խմբակային աշխատանքի լավագույն ձևն է: Սակայն կարող են լինել կոլեկտիվ աշխատանքի ուրիշ ձևեր ևս: Այսպես որինակ՝ յեթե կան թղթակցություններն ավելի զրազետ գրելու ցանկություն

ունեցողներ, կարելի չէ այդպիսի ընկերներից կազմակերպել մի խմբակ և նրանց համար գտնել մի զրազետ ղեկավար — մի փորձված գյուղթղթակից, խմբակի անդամ, կամ դպրոցի ուսուցիչ: Այդպիսի խմբակը պետք է աշխատի ամբողջովին հենվելով իր անդամների ինքնագործունեյության վրա: Կարելի չէ այդ խմբակի աշխատանքն այնպես դնել, վոր ժամանակ առ ժամանակ գյուղթղթակիցները հավաքվեն և կատարեն հետևյալը.

ա) Ընկերների առանձին քրթակցությունների վերլուծում ու ֆնկցիոն — լավ է գրված թղթակցությունը թե վատ, հասկանալի՞ չէ նրա խմաստը, ճիշտ են արդյոք թղթակցության յեղրակացությունները, թղթակցության հեղինակը գիտե՞ արդյոք այն գործի տեխնիկան, վորի մասին գրում է, ի՞նչպես պետք էր գրել այդ թղթակցությունը: Շատ արժեքավոր կլինի, յեթե խմբակի անդամները վերակազմեն քրթակցությունը և նորից ֆնկեն այն ուղղելուց հետո:

բ) Խմբակի անդամների քրթակցություն կազմելն իրենց տրված հարցի մասին: Դրա համար խմբակի ղեկավարը պետք է ընկերներին թղթակցության նյութ տա — գրել, ասենք թե, կոլտնտեսության անասնապահական ֆերմայի աշխատանքի տեսչության անդամները պետք է գնան ֆերմա, խմբակի բոլոր անդամները պետք է գնան ֆերմա, ծանոթանան նրա աշխատանքներին, խոսեն այնտեղ աշխատողների հետ, փաստեր հավաքեն: Հետո յուրաքանչյուր գյուղթղթակից, խմբակի անդամ իր հավաքած նյութերի համաձայն կգրի մի թղթակցություն: Յերը նրանցից յուրաքանչյուրը գրած կլինի այդպիսի մի թղթակցություն, հարկավոր է խմբակը նորից հավաքել և հերթով կարգալ յուրաքանչյուր գրված թղթակցություն,

խիչ հետո համեմատել մեկը մյուսի հետ: Այդ յեղանակով կարգվի, թե ո՛վ է ավելի լավ գրել, ո՛վ է իր թղթակցության մեջ հայտարարել այս կամ այն թերությունները: Այս ամենը կարելի չէ անել կոլեկտիվ ձևով, միասնաբար խորհրդակցելով: Դա շատ բան կտա գյուղթղթակցին:

դ) Խմբակում կարդալ և քննարկել ու վերլուծել տպագիր քերթերի առանձին քղթակցություններ: Դրա համար կարելի չէ վերցնել «Խորհրդային Հայաստան»-ից, «Ավանդարդ»-ից, կամ չըջանային թերթից վորևէ դուր յեկած թղթակցություն, և բարձրաձայն կարդալ: Հետո վերլուծել, թե այդ թղթակցությունն ինչո՞ւ չէ դուր յեկել, ինչպե՞ս է գրված այն, և այլն:

դ) Կարդալ վոքսե գեղարվեստական յերկից մի հատված: Այդ ևս խմբակի անդամների համար ոգտակար կլինի. նրանց կսովորեցնի ավելի լավ գրել թղթակցությունները:

Բացի այդպիսի խմբակից, յեթե ցանկացող ընկերներ կան, կարելի չէ կազմակերպել նաև գրական խմբակ այն ընկերներից, վորոնք սկսել են գրել վոտանավորներ, քառյակներ, փոքրիկ պատմվածքներ, ֆելյետոններ: Այդպիսի դեպքերում ղեկավար գտնելու գործը մի քիչ ավելի դժվար կլինի: Սակայն այստեղ ևս կարելի չէ յեղք գտնել: Կարելի չէ կապ ստեղծել չըջանային թերթին կից գոյություն ունեցող գրական խմբակի հետ: Յեթե չըջանային թերթին կից այդպիսի խմբակ չկու, կարելի չէ կապվել «Խորհրդային Հայաստան»-ի բանգյուղթղթակիցների բաժնի հետ: Այդ բաժինը ցուցումներ կտա, թե ինչպե՞ս պետք է կազմակերպել գրական խմբակի աշխատանքը:

Վորոչ կոլտնտեսություններում գյուղթղթակիցների մի մասը մասնակցում է կենդանի ու բանավոր թերթերին: Գյուղթղթակիցների այդպիսի

խմբակներին պետք է մասնակից անել տվյալ կոլտնտեսության գյուղթղթակցային կոլեկտիվի ընդհանուր աշխատանքին: Պատի թերթի խմբագիրն ու խմբագրական կոլեգիան պատասխանատու քյուն են կրում վոչ միայն պատի քերթի, այլև այն ամենի համար, ինչ հաղորդվում է կենդանի կամ բանավոր քերթերում:

Ըստ հնարավորին գյուղթղթակիցներին պետք է սովորեցնել նաև լուսանկարել, ծաղրանկարներ նկարել՝ այդ գործի համար ոգտագործելով լուսանկարչություն և նկարչություն իմացող մարդկանց, յեղած գրականությունը և այլն:

Ի հարկե, մենք մտադիր չենք վերը թված խմբակներով սահմանափակել աշխատանքը, գյուղթղթակիցների մեջ: Խմբակային ուսուցման աշխատանքի համար ուրիշ հնարավորություններ ևս կան: Տեղերում ավելի պարզ կլինի, թե ինչպիսի խմբակ հնարավոր է և պետք է կազմակերպել: Այստեղ մենք միայն որինակի համար նշեցինք, թե ցանկության դեպքում ինչպե՞ս կարելի չէ կազմակերպել խմբակային աշխատանքը:

XI. ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԻՆՖՆԱՖՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՄԲ

Գյուղթղթակիցների դաստիարակությունը միայն խմբակային աշխատանքով և թղթակցությունների գրելով չի սահմանափակվում: Անհրաժեշտ է նաև ուշադիր հետևել, վոր գյուղթղթակիցների մեջ վորևէ անցանկալի յերևույթ չլինի: Դրա համար անհրաժեշտ է գյուղթղթակցային կոլեկտիվի մեջ բոլշևիկյան ինքնագնահատություն գարգացնել: Յուրաքանչյուր կազմակերպություն միայն այն դեպքում կարող է հաջողությամբ աշ-

խատել, յեթե նրա մեջ ծավալված է ինքնաքննադատութիւնը: Առանց ինքնաքննադատութեան միշտ եւ գոյութիւն ունի գոռոզութիւն և ամեն տեսակի անառողջ տրամադրութիւններ առաջանալու վտանգը:

Այդ վերաբերում ե նաև գյուղթղթակիցներին: Հարկավոր է գյուղթղթակիցներին սովորեցնել, վոր նրանք քննադատեն իրար և բոլշէիկորեն վերաբերվեն քննադատութեանը:

Որինակ՝ ինչպիսի թերութիւններ են լինում գյուղթղթակիցների մեջ:

1. Վորոշ գյուղթղթակիցներ սիրում են միայն գրել, բայց իրենց հարուցած հարցը մինչև վերջ չեն հասցնում: Այդպիսի գյուղթղթակիցները գրում են թերթում և դրանով ել իրենց խնդիրն ավարտած համարում: Այդ ճիշտ չէ: Այդպիսի աշխատանքը հարկավոր է քննադատել գյուղթղթակիցների ժողովներում, խմբագրական կոլեգիայի նիստերում, խմբակային պարապմունքներում, նույնիսկ ընդհանուր կոլտնտեսային և բրիգադային ժողովներում: Այդպիսի վարմունքը քննադատելու հետ միաժամանակ պետք է նշել, վոր գյուղթղթակիցն այս կամ այն թերթին թղթակցութիւն տալով՝ հենց ինքն ել տեղում պետք է հետևի, թե ինչ է արվում իր թղթակցութեան առթիւ՝ ուղղված է արդյոք նշված թերութիւնը, ուղղվե՞լ է արդյոք թերթում քննադատութեան յենթարկված աշխատողը: Գյուղթղթակիցը պետք է հետևի վոչ միայն իր թղթակցութեան արդյունքներին, այլև այն անտեսութեան, տվյալ բրիգադի մասին. նա կոլտնտեսութեան վարչութեանը, գյուղխորհրդին, կուսկազմակերպչին, բրիգադիին իրագել պիտի դարձնի այն բոլոր թղթակցութիւնների մասին,

վոր այս կամ այն թերթում տպվել են տվյալ կոլտնտեսութեան մասին:

Վորեւ հարց բարձրացնելով՝ գյուղթղթակիցը պետք է պնդի, վոր այդ հարցը մինչև վերջ իր լուծումն ստանա:

Յեթե թղթակցութեան վրա ուշադրութիւն չեն դարձնում, հարկավոր է անմիջապես դիմել կուսկազմակերպչին, այնպես անել, վոր թղթակցութիւնը քննութեան յենթարկվի արտադրական խորհրդակցութիւնում, կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, կուսակցական կազմակերպութեան ժողովում, գյուղխորհրդի նիստում:

Մամուլի ձայնը չարամտորեն անուշադիր թողնելու առանձնապես լուրջ դեպքերում հարկավոր է դիմել շրջանային, կամ կենտրոնական թերթին, դատախազութեանը, վերադառ խորհրդային մարմիններին: Հարկավոր է կապ պահպանել խորհրդային և կուսակցական վերահսկողութեան հանձնաժողովի մարզային, հանրապետական լիազորութիւնների հետ:

2. Կան և այնպիսի գյուղթղթակիցներ, վորոնք վոչ թե չար դիտավորութեամբ, այլ պատասխանատվութեան գիտակցութեան նվազութեան, դեպի գյուղթղթակցի աշխատանքն ունեցած մակերեսային վերաբերմունքի հետևանքով, թերթերին անհիշտ փաստեր են հաղորդում:

Վորոշ գյուղթղթակիցներ սխալի մեջ են ընկնում այն պատճառով, վոր գրում են չստուգված լուրերի, յերրորդ անձնավորութիւններից լսածներին, ուրիշների խոսքերի հիման վրա, գրում են այն թերութիւնների մասին, վորոնք մի ժամանակ յեղել են, բայց այժմ չկան: Գրում են բոլորովին ուշացած և հնացած հարցերի մասին: Այդպիսի դեպքերը պետք է վերացնել գյուղթղթակիցների մեջ դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու մի-

Ջոյով, պետք է բացատրել նման վարժունքի ան-
թույլատրելիութունն այն ընկերներին, վորոնք
այդ անում են իրենց կիսադրազիտության, սակավ
կուլտուրականության հետևանքով: Յեթե պատի
թերթում պատահել է, վոր անճիշտ թղթակցու-
թյուն է տեղավորվել, ապա այդ բանը չպետք է
ծածկել կոլտնտեսային հասարակայնությունից:
Ընկերներից վոմանք կարծում են, թե՝ թերթի ե-
ջերում խոստովանել իրենց թույլ տված սխալը՝
նշանակում է գցել պատի թերթի և գյուղթղթակից-
ների հեղինակութունը: Այդ ճիշտ չէ՝: Այդպիսի
դեպքերում թերթի հեղինակութունն արդեն իսկ
ընկնում է այն բանով, վոր թերթը զրպարտել է և
աղավաղել է վորևէ փաստ: Հեղինակութունն ա-
վելի ևս կընկնի, յեթե պատի թերթն անմիջապես
ազնվորեն, բուշեկիորեն չհայտարարի կատարված
դեպքի մասին, չընդունի իր սխալը, մորիկիցացիա-
յի չենթարկի իր թղթակիցներին՝ նման դեպքերի
կրկնության դեմ: Հերքում տպելը պատի թերթի և
գյուղթղթակիցների հեղինակութունը վոչ թե
կզցի, այլ ընդհակառակն, դա կլինի սխալի ան-
կեղծ ուղղում և մի քայլ՝ ընթերցողի հարգանքը
նվաճելու համար:

Հրաժարվել իրավացի հերքումը տեղավորելուց՝
նշանակում է ե՛լ ավելի խախտել վստահությունը
դեպի թերթը: Մարդիկ կասեն. «Այդ ի՞նչպես բան
է, քննադատել՝ քննադատում են, իսկ քննադատու-
թյանը պատասխանել՝ թույլ չեն տալիս»: Իրավա-
ցի հերքումը պետք է տպագրել: Սակայն հասկա-
նալի յե, վոր այդ չի նշանակում, թե կարելի յե
թեթևամտորեն վերաբերվել դեպի հերքում տեղա-
վորելը՝ մոռածելով՝ «Դե ի՞նչ կա, մեծ բան չէ՝,
սխալվեցինք, հերքում կտպենք...»: Յեթե թերթի
յուրաքանչյուր համարում հերքում է տեղավոր-
վում, նշանակում է, նրա բանը բուրդ է: Նշանա-

կում է հարկավոր է ձեռնամուխ լինել ամբողջ պա-
տի թերթի արժատական վերակառուցմանը:

3. Վորոչ գյուղթղթակիցներ համառորեն չեն
ցանկանում քերքում գրել իրենց իսկական ազգա-
նունով: Նրանք դերադասում են գրել միայն հնա-
րովի ազգանուններով, կամ վորևէ մտացածին ա-
նունով (կեղծ անունով) «Ա. չք», «Դիտող», «Տես-
նող» և այլն:

Ի՞նչ անել այդպիսի դեպքերում: չե՞ վոր մի
բանի նման չե, յերբ թերթում տեղավորված թրդ-
թակցությունների մեծ մասի տակ այդպիսի կեղծ
անուններ են գրված:

Իհարկե, չի կարելի յուրաքանչյուր գյուղթրդ-
թակցին ստիպել, վոր անպայման ամեն մի թղթակ-
ցության տակ իր իսկական անուն ազգանունը գնի:
Հարկավոր է գործել դաստիարակությամբ: Մի
կողմից պետք է ցույց տալ, վոր հարկավոր չե կեղծ
անուն դնել, պետք է բացատրել, վոր ցանկալի յե
ճիշտ անունով ստորագրել: Մյուս կողմից ամեն
անգամ պետք է քննել և պարզել, թե ինչո՞ւ այդ
թղթակիցը ցանկանում է վորոչ թղթակցություն-
ներ կեղծ անունով տեղավորել: Գուցե նա յուրջ
հիմքեր ունի կասկածելու, թե իր քննադատության
համար հայածանքի կենթարկվի: Գուցե կոլտնտե-
սության մեջ վորոչ մարդիկ քննադատությունը
ճնշելու պայմաններ են ստեղծում: Այդպիսի դեպ-
քերում ամբողջ խմբագրական կոլեգիան և գյուղ-
թղթակիցները պետք է հարցը դնեն կուսակցական
կազմակերպության առաջ, կոլմարջության և գյուղ
խորհրդի առաջ: Պետք է այնպես անել, վոր կու-
սակցական, խորհրդային և կոլտնտեսային կազմա-
կերպությունները թույլ չտան այնպիսի գրություն
ստեղծվի, վոր գյուղթղթակիցներն ստիպված լի-
նեն թաղնվել կեղծ անունների տակ: Յերբմն տե-
ղերում հնարավոր չի լինում համաձայնության

դալ, վորովհետեւ, առենք թե՛ կոլտնտեսութեան զեկավարութեան մեջ են խցկվել դասակարգային թշնամիներ, ոպորտունիստներ, անպետք մարդիկ: Այդպիսի դեպքերում պատի թերթի խմբագիրը պարտավոր է կուսակցութեան շրջանային կոմիտե- յի առաջ հարց դնել՝ կոլտնտեսութեան փտած զե- կավարութեան մասին:

4. Վորոշ հետամնաց գյուղափոխակիցներ մեկու- օտեւում են տեղական կազմակերպութիւններից: Նրանք ամեն մի տեղական աշխատողի մոտենում են կանխակալ համոզմունքով, շարունակ ցանկանա- լով անպայման «հուպ տալ», «սեւացնել» նրանց:

Այդպիսի գյուղթղթակիցները չեն նայում, թե այդ մարդը լա՞վ է աշխատում, թե՞ վատ: Նրանք հայհոյում են աջ ու ձախ: Այդպիսի գյուղթղթա- կիցների համար, փոքրիկ սխալը կամ խոշոր թե- րութիւնը միևնույն բանն են:

Այդպիսի գյուղթղթակիցները շարունակ ծաղ- րում են բոլորին, խայտառակում, հայհոյում են մարդկանց, զանազան անուններ կայցնում նրանց: Պետք է այնպես անել, վոր այդպիսի գյուղափո- փակիցները վերջ տան իրենց այդ կործանարար սովո- րութեանը: Ամեն անգամ քննադատելիս պետք է նկատի առնել, թե ում՝ ինչ ձեռք մոտենալ: Յեթե օխալվել է լավ աշխատողը, ապա այդպես ել պետք է գրել, թե՛ սխալն այսինչ այսինչ բանն է: Յուրջ տուր ընկերաբար: Յեթե գործ ունես անուղղելի լողերի հետ, ավելի խիստ քննադատիր: Իսկ յեթե խոսքը վերաբերում է այնպիսի մարդու, վորին կարելի չէ ուղղել, քննադատիր ընկերաբար: Հիշե- լով մետալուրգների հետ ունեցած զրույցի ժամա- նակ, ընկ. ՍՏԱՆԻՆԻ տված ցուցումները՝ յուրա- քանչյուր գյուղթղթակից պետք է առանձնապես հոգատար վերաբերմունք ունենա, յերբ քննադա- տում է այն կոլտնտեսականներին ու աշխատողնե-

րին, վորոնք տիրապետում են իրենց գործի տեխ- նիկան և վոչ միայն պետք է քննադատի սխալներն ու թերութիւնները, այլև ակտիվորեն ոգնի նրանց ուղղելու այդ սխալները: Իսկ ինչ վերաբերում է կուլակին ու նրա գործակալներին, յերկերեսանիւնե- րին, կուսակցութեան դավաճաններին, ապա նրանց պետք է մերկացնել ամենավնասական ձեռք ու ան- խնայ, վորպես թշնամիներին:

Կուլտնտեսային աշխատանքի թերութիւնների ֆննդատութիւնը պետք է լինի գործարար, փաս- տերի վրա հիմնված: Նա չպետք է լինի միակող- մանի, այլ անպայման պետք է հաշվի առնել նաև ֆննդատվող աշխատանքի դրական կողմերը: Քննադատութիւնը պետք է գերծ լինի չարամիտ ծաղրից, կոպիտ արհամարհանքից, մեր աշխատա- վորներին վարկաբեկելուց, ֆննդատվող ընկեր- ների մարդկային արժանապատվութիւնը վիրա- վորելուց:

Յերբեմն պատի թերթերի խմբագիրներն իրենք են խրախուսում քննադատութեան նման վնասակար աղավաղումներ: Այսպես որինակ, վորոշ պատի թերթերում տեղավորվում են վիրավորական ծաղ- րանկարներ (մարդկանց ներկայացնում են անասունի կերպարանքով, այլանդակ ձևով և այլն) վիրավո- րական կոչումներ և այլն:

Վորոշ պատի թերթերի խմբագիրներ «Ով ինչ է յերագում» բաժնի մեջ տեղավորում են ամեն տե- սակի անհեթեթութիւններ, վորոնք ամենեին ել ծիծաղելի չեն, այլ միայն վրդովեցուցիչ: Հասկա- նալի չէ, վոր այդպիսի ծաղրանկարները և վիրա- վորական ծաղրը չեն ոգնում կազբեր աճեցնելու գործին, նրանց բարելավմանն ու ամրապնդմանը: Իսկ ինքնաքննադատութիւնը մեզ հարկավոր է օոցխալիստական շինարարութիւնը ամրապնդելու

համար, այդ չինարարութեանն ամէլի ու ամէլի լավ կադրեր տալու համար: Ահա թե ինչ պետք է հիշեն գյուղթղթակիցները և պատի թերթերի խմբագիրները:

5. Վորոշ գյուղթղթակիցներ տառապում են այն բանով, վոր սովոր են տեսնել միայն թերութիւնները և չեն նկատում, դրական կադմերն ու նվաճումները: Այդ աշխատանքի սխալ թեքում է և մնաս է բերում գործին: Ինչո՞ւ: Վորովհետեւ մեր մամուլը, պետք է իմանա վո՛չ միայն բացասական վատ փաստերը, սխալները, կուսակցութեան գիծն աղավաղող փաստերը և այլն: Մամուլը պետք է իմանա նաեւ յուրաքանչյուր լավ աշխատանքի փայլուն որինակը, աշխատանքային հերոսութեան յուրաքանչյուր նոր յերեւոյթը, կուսակցութեան յուրաքանչյուր նոր կուստուրական նախաձեռնութիւնը: Մի տեսե՛ք ի՞նչ կատաղվեր, յեթե բոլոր գյուղթղթակիցներն իրենց ուղադրութիւնը կենտրոնացնէին միայն թերութիւնների վրա: Կատաղվեր այն, վոր մեր կյանքը կուսարաններ բոլորովին սխալ, ինչպէս ծուռ հայելու մեջ: Բոլշևիկյան մամուլը քննադատում և սովորեցնում է վոչ միայն վատ յերեւոյթների վերլուծման միջոցով, այլև ցույց տալով սոցիալիստական աշխատանքի լավագույն որինակները, քննութեան առնելով և ցույց տալով մեր յերկրի լավագույն մարդկանց փորձերը, խրախուսելով յուրաքանչյուր բոլշևիկյան որինակ:

6. Վորոշ գյուղթղթակիցների աշխատանքում կան և ուրիշ բացասական կողմեր: Որինակ՝ վոմանք սիրում են իրենց թմբկահարել, ցույց տալ թերթում և ժուրնալներում (իրենց մասին ուղարկում են գովասանական թղթակցութիւններ և իրենց լուսանկարները): Ուրիշներն իրենց համար պատրաստել են տալիս զանազան տեսակի կնիքներ,

չտամպներ, պաշտոնական բլանկներ և այլն: Վոմանք միևնույն թղթակցութիւնը մի քանի պատճենով ուղարկում են զանազան թերթերի: Այս ամենը վոչ մի դեպքում չի կարելի անել:

Վորոշ ընկերներ անգիտակցութեան հետեանքով իրենց գրած թղթակցութեան տակ դնում են իրենց ընկերների անունը: Սա ուղղակի հանցագործութիւն է:

Յերբեմն վորոշ գյուղթղթակիցներ, նույնպէս անգիտակցութեան հետեանքով, թերթերից արտագրում են ուրիշի թղթակցութիւնները՝ մի քիչ փոխելով միայն և դնելով իրենց կուսնտեսութեան, բրիգադի մարդկանց անունները: Իսկ վորոշ թղթակիցներն եւ ուղղակի յուրացնում են ուրիշի թղթակցութիւնները, վոտանավորները, կամ պատմվածքները: Այդպիսի արարքները կոչվում են գրագողութիւն:

Պարզ է, վոր նման արարքները պետք է ամենախիստ քննադատութեան յենթարկվեն: Յեթե մեր այս թված արարքներից վորեւ մեկը կատարվել է անգիտակցութեան հետեանքով, կամ պատահաբար, ապա այդպիսի ընկերոջը պետք է ոգնել, վոր նա ուղղվի: Հարկավոր է այդպիսի մարդուն վտարել գյուղթղթակիցների շարքերից: Ամէլի լավ է նրան հասարակական պարսավանք հայտարարել, մի լավ քննադատել:

Սակայն, յեթե այդ արել է գյուղթղթակիցների շարքերը խցկված թշնամին, այդ դեպքում պետք է առանց խնայելու վտարել այդպիսի կեղծ թղթակցին թղթակցական շարքերից:

XLII. ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԻ ՄԱՔՐՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղթղթակիցները պետք է ուշի ուշով հե-
տենն, վոր իրենց շարքերը չխցկվեն դասակարգա-
յին թշնամիներն ու քայքայված մարդիկ: Յեթե
դասակարգային թշնամին փորձի պատի թերթում
գրել, յուրաքանչյուր ազնիվ գյուղթղթակից պետք
է այդ մասին նախազգուշացնի խմբագրական կո-
լեգիային և խմբագրին:

Այդ գործում պետք է ողնել նաև տպագիր թեր-
թերին, հայտնելով նրանց, թե վոր մարդկանցից
պետք է զգուշանալ: Յեթե գյուղթղթակիցը նկա-
տում է, վոր վորեն խորթ մարդ գրում է այս կամ
այն թերթին, նա պետք է անմիջապես այդ մասին
տեղեկացնի տվյալ թերթի խմբագրութեանը: Բո-
լոր այդպիսի դեպքերի մասին պետք է լայն կեր-
պով տեղեկացնել կոյտնտեսական մասսաներին,
վորպեսզի թշնամին չկարողանա իր կեղտոտ մու-
թը կոխել բոլշևիկյան թերթի եջերը:

Գյուղթղթակիցների շարքերը խորթ տարբերով
կեղտոտվելու դեմ պայքարելը յուրաքանչյուր
գյուղթղթակցի առաջնակարգ պարտականութեանն
է: Միշտ պետք է հիշել, վոր դասակարգային թըշ-
նամին ձգտում է ոգտագործել հեղափոխական զգո-
նութեան ամենափոքր թուլացումն անդամ, վորտեղ
էլ լինի այդ: Հաճախ դասակարգային թշնամին
մեծ սիրով գրիչ է վերցնում, վորպեսզի վնասի մեր
գործը: Դրա համար էլ պետք է աշայուրջ հետեւել,
վոր պատի թերթը պատրաստվի միմիայն կուտակ-
ցութեան նմիւրված, կոյտնտեսային գործին նմիւր-
ված մարդկանց ձեռքով:

Դասակարգային թշնամին զանազան ձևերով և
փորձում մամուլն ոգտագործել իր ստոր նպատակ-

ների համար: Իհարկե, հարկավոր է ժամանակին
մերկացնել թշնամու մանյովները:

Պատահում է, որինակ, այսպես. վորեն մար-
դու դասակարգայնորեն խորթ գործի համար դուրս
են արել կոյտնտեսութեան աշխատանքից, և ահա,
այդ մարդը «դառնում է գյուղթղթակից», վորպես-
զի մամուլի միջոցով վարկաբեկի նրանց, ովքեր
իրեն մերկացրել և դուրս են արել:

Դասակարգային թշնամին վարվում է նաև այս-
պես. ինքը կոյտնտեսութեան մեջ վորեն գործ տա-
պալում է և մարդկանց աչքին թող փչելու համար,
հենց ինքն էլ թղթակցութեան է գրում չըջանային
թերթին՝ այդ գործի տապալման համար մեղա-
դրելով բոլորովին անմեղ մարդկանց, ազնիվ աշ-
խատողներին:

Յերբեմն թշնամիները գործում են նաև այս-
պես. թերթին ուղարկում են միանգամայն սուտ
տեղեկութեաններ՝ գովաբանելով կոյտնտեսու-
թեանը, թե ահա՝ «արդեն մեր կոյտնտեսութեան
մոտ ամեն ինչ լավ է, վոր մի անկարգութեան մեղ
մոտ չկա»: Կարգում են կոյտնտեսականներն այս-
պիսի թղթակցութեանը, հուզվում, վրդովվում ու
ատում. «Փչել է գյուղթղթակիցը հա՛»: Իսկ թըշ-
նամին գոհ է, վորովհետեւ այդ ձևով նա անվստա-
հութեան է ստեղծում գեպի մամուլը:

Վորոշ կեղծ թղթակիցներ ձևացնում են իրենց
«հալածվող գյուղթղթակիցներ»: Մերկացրել են
այդպիսի կեղծ թղթակցին՝ վորպես կոյտնտեսու-
թեան խցկված թշնամու, վտարել են նրան կոյ-
տնտեսութեանից, իսկ նա գրում է. «Ինձ վտարե-
լ են նրա համար, վոր յես քննադատում եյի»: Այս-
պիսի սիմուլյանտներին իրենք՝ գյուղթղթակից-
ները պետք է ջրի յերես հանեն:

Դասակարգային թշնամու այսպիսի վրտնձգու-
թեաններ զեմ պայքարելու համար հարկավոր է

համախմբել հենց իրենց՝ գյուղթղթակիցներին և բոլոր կոլտնտեսականներին և խիստ դատաստան տեսնել նրանց հետ, ովքեր մամուլն ոգտագործում են ի վնաս կոլտնտեսային գործի:

XIII. ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԱՆՔՆԵՐԻՑ

Գյուղթղթակիցներին դաստիարակելով վորպես կուսակցության ու խորհրդային իշխանության ակտիվ ոգնականների՝ միաժամանակ հարկավոր է աչալուրջ կերպով պաշտպանել նրանց լողրերի և բացահայտ դասակարգային քննամիների հետապնդումներից՝ իրենց մերկացնելու համար: Յեթե այստեղ ժամանակին դասակարգային զգոնություն հանդես չբերվի, ապա գրանով իսկ կարճակվեն բոլջեիկյան ինքնաքննադատության թշնամիների ձեռքերը: Տեսնելով, վոր պատի թերթի խմբագրերը, խմբագրական կոյեզիան և մյուս թղթակիցները պաշտպան չեն կանգնում հալածյող ընկերոջը՝ դասակարգային թշնամին, ոպորտունիստը, բյուրոկրատը, խուլիգանն ե՛լ ավելի կլկտիանան և սպառնալիքներից կանցնեն գյուղթղթակցի բացարձակ հալածանքին, իսկ յերբեմն ել կշխմեն սպանության:

Ուստի և գյուղթղթակցի անձեռնմխելիության համար հաջող պայքար մղելու ամենաառաջին պայմանը պետք է լինի՝ գյուղթղթակցի ամենահամարձակ պաշտպանությունը հենց առաջին, նույնիսկ ամենափոքր սպառնալիքի դեպքում, նրան վիրավորելու, կամ հետապնդելու դեպքում:

Չպետք է սպասել, մինչև հալածյող ընկերը բողոքով դիմի չրջանային կամ կենտրոնական թերթին, կուսակցության չրջկոմին կամ դատախա-

զին: Հենց իրենք՝ պատի քերթի խմբագրական էդիգիան և նրա քղթակիցները պետք է անմիջապես վոտփի հանեն ամբողջ կոլտնտեսային հասարակայնությունը՝ գյուղթղթակցի դեմ տեղի ունեցած առաջին իսկ, նույնիսկ ամենափոքր և ամենափոքարկված հալածանքի դեպքում:

Դեռևս 1924 թվին ընկեր Ստալինը բանդյուղթղթակիցների հալածանքի մասին այսպես եր ա-

սում. «Բանվորական և գյուղացիական թղթակիցներին հալածելը բարբարոսություն է, բուրժուական կարգերի մնացորդ... Իր թղթակցին հալածանքից պաշտպանելու գործն իր ձեռքը պետք է վերցնի թերթը, վորը միայն ընդունակ է մերկացնող, դաժան ագիտացիա կազմակերպել խավարամոլության դեմ»:

Վատ է, յերբ իրենց գրած թղթակցության կամ բանավոր քննադատության համար կոլտնտեսականը հալածվում է գաղտնարար և ալդպես ել մնում և առանց կոլտնտեսության մեջ լայնորեն հրապարակելու այդ յերևույթը: Վատ է, յերբ այդպիսի դեպքերի քննությունը կատարվում է գրասենյակային կարգով. գալիս է, ասենք, քննիչը, կամ մի լիցիոները՝ հարցաքննում մեկ յերկու հոգու և գնում... Քննությունն, ի հարկե, պետք է կատարել իր հերթին: Սակայն գլխավորն այն է, այնպես անել, վոր, վո՛չ քննամին, վո՛չ խուլիգանը և վո՛չ բյուրոկրատը չհամարձակվեն հալածել ագնիվ գյուղթղթակցին, կուսակցության ռգնականին: Այնպես անել, վոր ամբողջ տեղական հասարակայնությունը, տեղական Լուսակցական կազմակերպությունը, Լուսնտեսականների րնդհանուր ժողովո ցախջախեն այդ գազազած խավարամոլին, լիցի նա կուլակ, յենթակուլակ, բյուրոկրատ, քեխուլիգան:

Ահա թե բոլոր ազնիվ կոլտնտեսականներն ինչպես պետք է ակտիվորեն միջամտեն գյուղթղթակիցներին հալածանքին: Այն ժամանակ ինքնաքննադատության թշնամին կվախենա ձեռք բարձրացնել գյուղթղթակցի վրա, վորովհետև նա ստիպված կլինի հանդիպել վոչ թե մեկ գյուղթղթակցի, այլ ամբողջ կոլտնտեսային հասարակայնությանը:

Հաճախ պատահում է այսպես. գյուղթղթակցին հալածում են— կամ ազնիվ գյուղթղթակցին կուլակ են հայտարարում, կամ պակսեցնում են նրա աշխուրհը, կամ կեղծ փաստաթղթերով հեռացնում են նրան կոլտնտեսությունից: Յերբեմն գյուղթղթակցին միայնակ դժվար է լինում ապացուցել, վոր իր դեմ հանցագործ հալածանք է սկսված. նա բավականաչափ փաստեր և ապացույցներ չունի իրեն հալածողների դեմ, չկան բավականաչափ վկաներ: Այդպիսի դեպքերում գալիս է դատաքննիչը և վերադառնում առանց գործը բացելու:

Ահա այստեղ ևս պատի թերթի խմբագիրն ամբողջ խմբագրական և տեղագրական և մյուս գյուղթղթակիցների ու կոլտնտեսականների հետ կարող է և պետք է ոգնի հալածվող գյուղթղթակցին, ապացուցի դիմակավորված հալածողների մեղավոր լինելը, վկայություններ տա, և քննչական մարմիններին ոգնի՝ մերկացնելու թշնամիների խորամանկ դավերն ընդդեմ կուլակցության գործին նվիրված գյուղթղթակցի:

Չպետք է լուել և մի կողմը կանգնել, ասելով, թե՝ թող առայժմ քննություն կատարեն վորտեղ հարկն է... Յե՛վ հետաքննությունը, և՛ դատարանին, և՛ շրջանային (մարզային, հանրապետական) թերթին ավելի հեշտ կլինի հալածվող գյուղթղթակցին պաշտպանել, յեթե տեղական հասարակայնությունն ոգնի նրանց քննելու յուրաքանչյուր այդպիսի գործը:

Հարկավոր է հիշել, վոր դասակարգային թրջնամին իր վնասարարական գործը կատարում է՝ չհամարձակվելով բացարձակ յեղույթ ունենալ: Նա գործում է խորամանկորեն: Հաճախ գյուղթղթակցի թշնամիները գործում են բամբասանքով. «Այս գյուղթղթակիցն, ասում են, լողը է»: Այդպիսի բամբասանքի միջոցով կարողանում են ազնիվ գյուղթղթակցին հեռացնել տալ կոլտնտեսությունից: Հաճախ դասակարգային թշնամին գյուղթղթակցին հալածում է՝ ոգտագործելով քննադատության չդիմացող, քայքայված, այլասերված, յերկերեսանի, լողը, խուլիզան և պոկողական մարդկանց ծառայությունները: Այդ բոլոր տարրերը ուրով կոլտնտեսությունից հեռացնում են այն կոլտնտեսականներին, վորոնք պայքարում են այլանդակությունների դեմ:

ԽՍՀՄ դատախազության հատուկ վորոչման մեջ (1933 թվի դեկտեմբերի 3-ի) ուղղակի առաջարկվում է:

«Նկատի ունենալով, վոր մի շարք դեպքերում գյուղթղթակից կոլտնտեսականների հալածանքն արտահայտվում է նրանց կոլտնտեսությունից հեռացնելու ձևով, այդպիսի գործերում մեղավորներին յենթարկել քրեական պատասխանատվության ոգոստոսի 7-ի վորոչման 3-րդ մասով, վորպես հանցապարտ գործողություն՝ ուղղված ընդդեմ կոլտնտեսային շինարարության»:

Իսկ ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի 1932 թվի ոգոստոսի 7-ի վորոչումն ասում է.

«Վճռական պայքար մղել այն հակահասարակական կուլակ-կապիտալիստական տարրերի դեմ, վորոնք բռնություն և սպառնալիք են գործադրում, կամ քարոզում են բռնություն և

սպառնալիք գործադրել կոլտնտեսականների նկատմամբ, նպատակ ունենալով վերջիններիս ստիպել դուրս գալ կոլտնտեսությունից, ցանկանալով բռնի կերպով քայքայել կոլտնտեսությունը: Այդ հանցագործությունները հալածարենցները պետական հանցագործություններին, կոլտնտեսությունները և կոլտնտեսականներին կուլակային և այլ հակահասարակական տարրերի սպառնալիքներից պաշտպանելու համար, վորպես դատական ռեպրեսիայի միջոց կիրառել ազատազրկում 5—10 տարի ժամանակով՝ համակենտրոնացման ճամբարներում:

Այդ գործերով դատապարտվածներին նկատմամբ ներում չկիրառել»:

Այստեղից յերևում է, թե խորհրդային իշխանությունն ինչպես է պատժում նրանց, ովքեր սպառնում են կոլտնտեսային բարիքը հափշտակողների և կոլտնտեսային գործին վնասողներին դեմ պայքարողներին: Գիտենալով այդ որենքը, իրենք՝ գյուղթղթակիցները պետք է խստորեն հետևեն, վոր այն կիրառվի գյուղթղթակիցներին սպառնացող, կամ նրան հալածող հանցագործների նկատմամբ:

Դրա հետ միասին, պետք է հետևել, վոր հալածանքների մասին յեղած գանգատներն իրոք հիմնավորված և ճիշտ լինեն: Թե չէ՝ լինում են և այնպիսի դեպքեր, վոր մեկը մի վորևէ բան է անում, նրան պատժում են, իսկ նա, վոր յերբեմն մեկ յերկու թղթակցություն է գրել, սկսում է գոռալ, թե իրեն «հալածում են վորպես գյուղթղթակցի»: Այդ արդեն նշան է անբարեխիղճ մարդու: Այդպիսի մարդուն պաշտպանություն տալ առնել չի կարելի: Պատահում է նաև, վոր խորթ տարրերը վորձում

են իրենց ներկայացնել վորպես «հալածվող գյուղթղթակից»: Այդպիսի սիմուլյանտների պաշտպանությունն արդեն հեղափոխական գզոնություն է բխացում կնշանակի:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՅՆՐ

1. Ի՞նչ են ասել լենինն ու Ստալինը բանգյուղթղթակիցների նշանակություն մասին:

2. Ինչպե՞ս պետք է լինի գյուղթղթակիցների կուտակցական ղեկավարությունը:

3. Ի՞նչու պետք է գյուղթղթակիցը լավագույն հարվածային լինի: Թվել, թե ինչպիսի թերություններ են լինում գյուղթղթակիցների մեջ և ի՞նչպես վերացնել այդ թերությունները:

4. Վե՞րոնք են գյուղթղթակիցների պարտականությունները:

5. Ի՞նչ է ստախանովյան շարժումը: Ի՞նչ պետք է անել և ի՞նչ կարելի յե անել ձեր կոլտնտեսությունում կենսագործելու համար ընկ. Ստալինի ցուցումն այն մասին, թե պետք է թամբել տեխնիկան և քամել նրանից այն ամենը, ինչ նա կարող է տալ, նոր տեխնիկայից յեռակի ու քառակի ավելի ստանալ, քան նա տալիս է այսօր:

6. Խմբագիրը և պատի թերթի խմբագրական կոլեգիան ի՞նչպես պետք է դաստիարակեն յուրաքանչյուր գյուղթղթակցին առանձին:

7. Ի՞նչ պետք է անել գյուղթղթակցական ժողովներում:

8. Ի՞նչպես կարելի յե կարգավորել գյուղթղթակիցների ինքնակրթությունն ուսուցման խմբակների միջոցով:

9. Ի՞նչ պետք է անել գյուղթղթակցին հալածելու դեպքում:

10. Ի՞նչպես պաշտպանել գյուղթղթակիցների շարքերը խորթ մարդկանց ներս սողոսկումից:

Այս դասախոսությունը կարդալուց և յուրացնելուց հետո կատարեցեք հետևյալ գործնական աշխատանքը:

1. Ամենից առաջ կուսկազմակերպչի և տեղական կազմակերպությունների ղեկավարությունում ոգնություն հավաքեցեք բոլոր գյուղթղթակիցներին և հետաքրքրվող կոլտնտեսականներին, կարգացեք այս դասախոսությունը և քննարկեցեք այն:

Կարդալու ժամանակ կանգ առեք դասախոսություն առանձին կետերի վրա և ընկերների հետ քննեցեք, թե ձեր կոլտնտեսությունում ի՞նչ վիճակի մեջ է դասախոսության մեջ չոչափված այս կամ այն խնդիրը: Հենց այդտեղ ել նշեցեք, թե այս դասախոսությունից ի՞նչ պետք է կիրառել՝ ձեր կոլտնտեսության գյուղթղթակիցների հետագա աշխատանքի ընթացքում:

Նշեցեք գյուղթղթակիցների ինքնակրթության աշխատանքի պլանը:

2. Մնացած գյուղթղթակիցների և կոլտնտեսականների հետ միասին քննեցեք, թե ձեզ մոտ ի՞նչպես պետք է կիրառել ստախանովյան շարժումը և ի՞նչպես լուսաբանել այդ հարցը պատի թերթում:

3. Գրեցեք և «Խորհրդային Հայաստանի» խմբագրությանն ուղարկեցեք մանրամասն թղթակցություն այն մասին, թե դուք և ձեր պատի թերթի խմբագրական կոլեգիան ինչպես եք աշխատանք կատարում գյուղթղթակիցների մեջ: Այդ թղթակցությունը գրելու ժամանակ մի անգամ ևս կարդացեք այս դասախոսությունը:



804

1
2

Б. ГОРЕЛИК

Как работать с селькорами

Издательство КП(б)А—„Хорурдаини Айастан“